Ազգ
Azg
11 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՈՒՐԲԱԹ 23(4642)
ISSN 1829-1651

# «Ադրբեջանն առաջինն է խախտում հրադադարը եւ չի կատարում պայմանավորվածությունները»

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը երեկ ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների խնդրանքով Սեյրան Օհանյանը ներկայացրել է իրադրությունը հայ-ադրբեջանական շփման գծում՝ նշելով, որ հայկական կողմը շարունակում է խստորեն պահպանել հրադադարի ռեժիմը: Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարը մտահոգություն է հայտնել Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների ու հատկապես դիպուկահար գործողությունների ակտիվացման կապակցությամբ, որի չեզոքացման ուղղությամբ հայկական կողմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

Պաշտպանության նախարարը մտահոգություն է հայտնել նաեւ գերիների վերադարձման վերաբերյալ 2010 թ. հոկտեմբերին Աստրախանում ձեռք բերված պայմանավորվածությունների՝ Ադրբեջանի կողմից ոչ լիարժեք կատարման եւ գործընթացին խոչընդոտելու կապակցությամբ: Հանդիպման ընթացքում կողմերը միակարծիք են եղել հրադադարի ռեժիմի պահպանման, ինչպես նաեւ վստահության ամրապնդման միջոցառումների իրականացման կարեւորության շուրջը: Այս հանդիպումը Մինսկի խմբի համանախագահների համար վերջինն էր Երեւանում. երեկ նրանք մեկնեցին Բաքու՝ «եղանակային պատճառներով» շրջանցելով Ստեփանակերտը:

Հ. Ա.

# Ազգային ժողովում երեկ որոնում էին ԲՀԿ-ին

Ազգային ժողովի նախագահի Հովիկ Աբրահամյանը երեկ, քառօրյայի վերջին օրվա սկզբում ընդունված համարեց մարդու իրավունքների պաշտպանի հրաժարականը, քանի որ Արմեն Հարությունյանը դիմումը երեք օրվա ընթացքում ետ չէր վերցրել: Հիմա արդեն նոր թեկնածուների փնտրտուքը ՄԻՊ-ի պաշտոնի համար ավելի թափով ճանապարհ կընկնի, քանի որ մինչեւ այժմ շրջանառվող անուններից ոչ մեկը, ըստ լուրերի, կարծես թե վերեւների «դաբրոյին» չի արժանանում: Հավանաբար հիմա արդեն լրջորեն պետք է փնտրել հեղինակավոր ու հարգանք վայելող մարդու, թեկուզ նախկին պատգամավորի...

## ԲՀԿ-ականներ որոնելիս

Երեկ լրագրողական փոքր խմբերը վազ էին տալիս Ազգային ժողովի միջանցքից միջանցք ու փորձում էին որեւէ առանցքային պատգամավորից մեկնաբանություն ստանալ, թե ճի՞շտ են արդյոք այն լուրերը, որ ԲՀԿ-ին պատրաստվում է այս օրերին ստորագրել մի նոր հուշագիր, որով կոալիցիոն ներկա գործընկերները հանձն են առնում կոալիցիան պահպանել նաեւ նոր խորհրդարանական ընտրություններից հետո: Անգամ ասվում էր, որ երեկ ու այսօր վերջին ժամկետն է, որի ընթացքում ԲՀԿ-ն պետք է բարձրաձայնի իր դիրքորոշման մասին: Սակայն ԲՀԿ-ականներ չէին հայտնաբերվում, հայտնաբերվածներն էլ խուսափում էին մեկնաբանություններից: Այսօր տեղի ունենալիք խորհրդարանական ճեպազրույցները մտնում են այն վերջնաժամկետի մեջ, ըստ որի մինչեւ փետրվարի 11-ը ԲՀԿ-ն պետք է դիրքորոշում հայտներ: Չգիտենք, այս բոլորը 100 տոկոսանոց ճշմարտությու՞ն է, կամ թե հիմնավորվա՞ծ է արդյոք ՀՀԿ-ն (նույն ինքը՝ Սերժ Սարգսյանը) տերվռազություն անում, արդյո՞ք այդպիսի հուշագիրն իրոք այդքան ակտուալ են համարում նրանք, բայց չենք կարծում, որ մեկ օրը հարց է լուծում՝ ամեն ինչ մեր կարծիքով կպարզվի վաղը, ԲՀԿ համագումարում: Մենք էլ այս բոլորին ավելի հիմնավոր անդրադարձ կանենք դրանից հետո: *Տես էջ 3*

# Գազի գնի մասին՝ մի քանի օրից

Հայաստան մատակարարվող գազի սակագների վերաբերյալ բանակցությունները Ռուսաստանի հետ շարունակվում են, արդյունքները հայտնի կլինեն մի քանի օրից: Այդ մասին երեկ լրագրողներին հայտնեց էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար **Արմեն Մովսիսյանը**: Նրա խոսքերով, հայկական կողմը ձգտում է գազի գինը անփոփոխ պահելուն:

Նախարարը երեկ նաեւ տեղեկացրեց, որ Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի այս տարի եւ կավարտվի 5 տարվա ընթացքում: Այժմ ընթանում են հողամասերի առանձնացման եւ լիցենզիաների տրամադրման գործընթացները: **Ա. Մ.**



# «Ազգի» վաղվա ներդիրում

**Վաղը «Ազգն» իր Պատմա-քաղաքական 8 էջանոց ներդիրում լույս կընծայի պատմաբան Սուրեն Սարգսյանի «Ազգը» 20 տարեկան է» վերնագրով ակնարկը մեր թերթի 20-ամյա պատմությանը, Գերմանիայից Անահիտ Հովսեփյանը «Որոգայթ» վերնագրով հոդվածում կանդրադառնա օտերու գերմանական հեռուստատեսությամբ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հակահայկական ֆիլմին, պատմաբան Ռաֆայել Համբարձումյանը կիրապարակի Գարեգին Նժդեհի անտիպ նամակը «Գարեգին Նժդեհի Ցեղակրոնությունը եւ Դաշնակցությունը» վերնագրով, արխիվագետ Ավագ Հարությունյանը կգրախոսի Մուշեղ Լալայանի «Ցեղակրոն եւ Տարոնական շարժումները» նորընծա գիրքը, եւ «Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական աշխատությունները արտասահմանյան մասնագետների գնահատմամբ» վերնագրով իր հոդվածը կներկայացնի Իտալիայում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը:**

## ԱՌԱՅԺՄ 25%-Ը ԼՈՆԴՈՆԻ ԲՈՐՍԱՅՈՒՄ

# Կենացները քաղցրանում են վրացական գազատարի շուրջը

**«Հյուսիս-հարավ» գազատարի վրացական հատվածի բաժնետոմսերի 25 տոկոսը կտեղաբաշխվի լոնդոնյան բորսայում:**

**Ադրբեջանական լրատվամիջոցները ամենայն գոհունակությամբ մեջբերումներ են անում վրացականներից, թե Վրաստանի էներգետիկայի նախարար Ալեքսանդր Խեթագուրիի խոսքերով, գազատարի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի վաճառք չի նախատեսվում, այլ միայն 25 տոկոսի:**

**Գազատարի վրացական այս հատվածի կարեւորությունը դժվար է թերագնահատել Հայաստանի համար, քանի որ այս մայրուղին է ապահովում ռուսաստանյան գազի մուտքը Հայաստան: Սրանով հանդերձ, արդեն իսկ գազատարի ձեռքբերման առնչությամբ հետաքրքրություն են արտահայտել Ռուսաստանը, Ադրբեջանը, Հայաստանը եւ Ղազախստանը:**

**«Ազգը» դեռեւս անցյալ տարեվերջին տեղեկացրել էր, որ հիշյալ գազատարի գնման կապակցությամբ հետաքրքրություն էր արտահայտել ադրբեջանական ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաեւը, հայտարարելով, թե այդ գազատարը կարող է օգտագործվել ադրբեջանական գազը Վրաստանի տարածքով եւ Սեւ ծովով Ռումինիա հասցնելու ծրագրի իրականացման համար: Մինչդեռ չպետք է մոռանալ, որ առավելապես ադրբեջանական հանրույթի՝ վրացական գազատարի ձեռքբերման առնչությամբ արված հայտարարությունները վերաբերում են ոչ թե կոնկրետ ծրագրերի, այլ Հայաստանի վրա ճնշման նման լծակ ունենալու տարբերակին:**

**Եթե ելնենք գնային առաջարկներից, որ արվել էին նույն այս գազատարի համար դեռեւս 2005-ին, երբ «Գազպրոմի» 250 մլն դոլար առաջարկի դիմաց ադրբեջանական նավթագազային ընկերությունն առաջարկել էր կրկնակին՝ 500 մլն դոլար, ապա հավանականությունը մեծ է, որ այդ գազատարը կարող է ձեռք բերել հենց ադրբեջանական ընկերությունը:**

Ա. Հ.

# Ուկրաինայի ԱԳ նախարարը Երեւանում

Երեկ երկօրյա պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Ուկրաինայի արտգործնախարար Կոնստանտին Գրիշչենկոն: Այցի ընթացքում նախատեսված են Կոնստանտին Գրիշչենկոյի հանդիպումները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Կոնստանտին Գրիշչենկոն կայցելի նաեւ Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին:

Ուկրաինայի արտգործնախարար Կոնստանտին Գրիշչենկոն Հայաստանում է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով:

Ա. Հ.

# Փոտոցուցահանդես՝ «Տեղահանություն, հետապնդում, ոչնչացում»

**Փետրվարի 11-ին ժամը 17.30-ին Բեռլինի «Ընդդեմ պատերազմի» անունը կրող թանգարանի Խաղաղության սրահում հանդիսավորապես կբացվի Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը վավերացնող «Տեղահանություն, հետապնդում, ոչնչացում» լուսանկարչական ցուցահանդեսը, որ պատրաստել է Բեռլինի Փաստագրության եւ վավերագրության հայկական կենտրոնը: Ցուցահանդեսը ողջույնի խոսքով կբացի հովանավորը՝ Բեռլինի կենտրոնի քաղաքապետ Քրիստիան Հանքեն: Այնուհետեւ ներկաները կունկնդրեն ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանի ելույթը, ինչին կհետեւի ցուցահանդեսը համակարգող դոկ. Թեսսա Հոֆմանի «Համաշխարհային պատերազմը եւ ցեղասպանությունը. 1915-16-ին Օսմանյան կայսրության հայերի ոչնչացումը» թեմայով դասախոսությունը: Նույն հեղինակի ցուցահանդեսի առիթով նախատեսված երկրորդ դասախոսությունը «Սարսափի եւ մեղադրանքի պատկերներ.1878-1922-ի լուսանկարչական վավերագրություն» կկայանա մարտի 10-ին, նույն վայրում:**

**Ցուցահանդեսը կգործի մինչեւ ապրիլի 30-ը, բաց է ամեն օր, ժամը՝ 16.00-20.00-ն:**

# «Թալեաթ փաշայի դատավարությունը»՝ բեմից

**Փետրվարի 12-ին, ժամը 20-ին (LabSaal,Berlin Luebars) եւ 27-ին, ժամը 16-ին (HAU2 թատրոնում) կներկայացվի Հայոց ցեղասպանության մասին պատմող «Թալեաթ փաշայի դատավարությունը» վավերագրությունը՝ Հայաստանից, Թուրքիայից, Ավստրիայից, Անգլիայից եւ Գերմանիայից 5 դերասանների եւ 1 երաժշտի մասնակցությամբ: Բեմական հիշյալ ընթերցումը, որ անցյալ տարի մեծ հաջողությամբ մատուցվել է Գերմանիայի տարբեր վայրերում, ներկայացնում է կարեւոր մի վավերագրություն՝ հենվելով դատական արձանագրությունների վրա:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Կիպրացի թուրքերը պատրաստվում են նոր հանրահավաքի մարտի 2-ին

*Կղզու թուրքական հատվածում շարունակվում է արհմիությունների համընդհանուր գործադուլը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հունվարի 28-ին Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի թուրքական հատվածում տեղի ունեցած հանրահավաքը կազմակերպել էր Արհմիությունների պլատֆորմը, որին աջակցել էին «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ընդդիմադիր կուսակցությունները: Հանրահավաքի ավելի քան 20 հազար մասնակիցներ բարձրացրել էին Կիպրոսի Հանրապետության դրոշը եւ կրել Թուրքիայի համար վիրավորական ցուցապաստառներ:




Թուրքական կենտրոնական թերթերը, ինչպես նշել էինք «**Ազգի**» փետրվարի 8-ի համարում, ըստ երեւույթին տուրք տալով կառավարության ցանկություններին, ամեն կերպ շրջանցում էին հանրահավաքի փաստը: Սակայն երբ վարչապետ Էրդողանը փետրվարի 7-ին դատապարտեց հանրահավաքի մասնակիցներին եւ Թուրքիային հասցեագրված ցուցապաստառների պատասխանատվությունը բարդեց Հյուսիսային Կիպրոսի ղեկավարության վրա, իսկ կիպրացի թուրքերը բուռն հակազդեցությամբ արձագանքեցին դրան, հանրահավաքն ակամա դարձավ պաշտոնական Անկարայի օրակարգի առաջնահերթ խնդիրը:

*Տես էջ 5*

# Իրավունք ունի՞ Լիտվան նախագահելու ԵԱՀԿ-ում

Ամենայն հավանականությամբ Լիտվայի Սեյմի նախագահ **Իրինա Դեգուտանեն** տեղյակ չէ, որ ԵԱՀԿ-ում նախագահությունը Ղազախստանից ստանձնելուց հետո իր երկրի արտգործնախարարը առաջինը այցելել է Մոսկվա՝ հանդիպելու Լավրովի հետ: Ստացվում է նաեւ, որ տիկին Դեգուտանեն տեղյակ չէ, թե ինչի՞ մասին եւ ամենակարեւորը՝ ի՞նչ շեշտադրումներով են հանդես եկել Մոսկվայում ԵԱՀԿ գործող նախագահող **Աուդրոնյուս Աժուբալիսը** եւ ԵԱՀԿ Մինսկի խմբում գոնե ներկա պահին առաջատար դեր ունեցող ՌԴ արտգործնախարարը: Իսկ վերջինս, հիշեցնենք, նշեց, որ անհրաժեշտ է ԵԱՀԿ տարածաշրջանում առկա բոլոր հակամարտությունները լուծելու համար «մշակել միանման սկզբունքներ»: Եթե հաշվի առնենք, որ Մոսկվան ճանաչել է ԵԱՀԿ տարածաշրջանում գտնվող Սուխումն ու Ցխինվալը, ապա ակներեւ է, թե ինչ «միանման սկզբունքների մասին» է խոսքը: **Լավրովի** այս մտքին Աժուբալիսը պատասխանում է, որ «Լիտվան, որպես ԵԱՀԿ գործող նախագահ աջակցում է Ռուսաստանի ջանքերին՝ ուղղված խաղաղ կարգավորման առաջընթացին»: Այլ կերպ ասած, Վիլնյուսը, եթե միանշանակ համաձայն չէ, ապա հաստատապես դեմ չէ Մոսկվայից: Սակայն այս ամենից փաստորեն «անտեղյակ» Լիտվայի Սեյմի խոսնակ Դեգուտանեն երեկ Բաքվում, հայտարարելով, որ «Լիտվան պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը», հայտարարել է. «Սեյմում մենք մշակել ենք ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ հռչակագիր, որտեղ մասնավորապես ԼՂ հարցի լուծումը պատկերացվում է բացառապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Գարնանային նստաշրջանը սկսելուն պես՝ մարտի 10-ից, մենք այդ հռչակագիրը, որն արդեն իսկ արժանացել է 50 պատգամավորների հավանությանը, կդնենք քվեարկության»: Իսկ այժմ ընդամենը երեք հարց. առաջին՝ ինչպե՞ս կարող է ԵԱՀԿ-ում Լիտվայի նախագահությունը լինել արդյունավետ, երբ այդ երկիրը առկա հակամարտություններից մեկում պաշտպանում է դրա կողմերից մեկին: Հարց երկրորդ՝ անգամ լինելով ԵԱՀԿ նախագահող երկիր՝ Լիտվան իրավունք ունի՞ իր խորհրդարանում քննարկելու եւ հաստատելու բանաձեւ՝ մի խնդրի վերաբերյալ, որի միջնորդները բազմիցս են կրկնում, որ «հիմա կարեւորը չխանգարելն է»: Եվ վերջին հարցը՝ հաշվի առնելով, որ Բաքվում արած այս հայտարարությունները ըստ ադրբեջանական աղբյուրների են, հետեւաբար միգուցե հերթական անգամ խեղաթյուրված են, ե՞րբ են պատրաստվում տիկին Դեգուտանեն անձամբ, Լիտվայի Սեյմն ու ԱԳՆ-ն պաշտոնապես հերքում տարածել, ոչ թե «կողմերից», այլ «մեկ կողմից»: Հակառակ պարագայում, առաջին հարցը կդառնա նաեւ միակը:

Հ. ԱՓՅԱՆ

ՃԱՄԱՔԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

# Կպարզեցնեն «հայ-վրացական» տեղաշարժը

Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների «Բագրատաշեն-Սադախլո», «Այրում-Սադախլո», «Գոգավան-Գուգուտի» եւ «Բավրա-Նինոծմինդա» ցամաքային կետերի համատեղ օգտագործման համաձայնագրի կնքման առաջարկությանը, որն ուղղված է ապրանքների, տրանսպորտային միջոցների եւ ուղեւորների տեղաշարժի պարզեցմանը:

Երեկ կառավարության նիստում վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշել է, որ դա կարեւորագույն փաստաթուղթ է, եւ պետք է արվի հնարավորը, որպեսզի Վրաստանի վարչապետի՝ առաջիկա երեքշաբթի Հայաստան կատարելիք աշխատանքային այցի ընթացքում այս գործընթացն իրականացվի:

Ասել է թե՝ Վրաստանի վարչապետը փետրվարի 15-ին աշխատանքային այցով լինելու է Երեւանում, ու հիշատակված փաստաթուղթն էլ կարեւոր է: Որ ապրանքների, տրանսպորտային միջոցների եւ ուղեւորների տեղաշարժի պարզեցումը շատ էլ կարեւոր է, ոչ ոք չի կարող վիճարկել, բայց որ այդ նույն պարզեցմանն ամենապարզ իմաստով ոչ մեկն ուշադրություն չի դարձնում, փաստ է:

Խոսքը, ասենք, «Բագրատաշեն-Սադախլո» ցամաքային սահմանային կետի մասին է, որտեղ ինչպես հայկական, այնպես էլ վրացական կողմից դրսի փողերով ինչ-որ բաներ նորոգել ու կարգավորել են, իսկ երկու սահմանակետերի միջեւ ընկած խեղճուկրակ կամուրջը մնացել է անմխիթար վիճակում: Եվ հաճախ են դեպքերը, երբ վրացական եւ հայկական կողմերի մաքսավորների ու սահմանապահների անխափան աշխատանքը դրսեւորվում է անիմաստ հերթերով այն պարզ պատճառով, որ Դեբեդի վրա չգիտես երբ կառուցված ու թերեւս երբեւէ նորոգում չտեսած «հայ-վրացական» կամուրջն այդպես էլ նեղլիկ, անբարեկարգ, նաեւ անապահով է մնացել:

Իսկ այն, որ «Գոգավան-Գուգուտի» եւ «Բավրա-Նինոծմինդա» անցակետերն էլ, հատկապես չեզոք, իսկ տվյալ դեպքում՝ անտեր հատվածներում գոնե ասֆալտի կարիք ունեն, ապացուցելու հարկ չունի: Հուսանք, որ այդ «չեզոք» հատվածների կարգավորման հարցն էլ կմտցվի ու կքննարկվի «ապրանքների, տրանսպորտային միջոցների եւ ուղեւորների տեղաշարժի պարզեցման» հետ զուգահեռ:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Երեւանում վերապատրաստվելու են Լեռնային Ղարաբաղի ու Ջավախքի բժիշկները

Հայ օգնության ֆոնդն իրականացնելու է Լեռնային Ղարաբաղի ու Ջավախքի բժիշկների վերապատրաստում: Ծրագիրը 2 տարվա ընթացքում նախատեսում է շուրջ 80 բժշկի վերապատրաստում ու կոչված է բարձրացնելու բժշկական սպասարկման որակը: Ծրագիրն իրականացնում է ՀՕՖ-ի բժշկական շրջանավարտների միությունը՝ համագործակցելով Հայաստանի ու ԼՂՀ-ի առողջապահության նախարարությունների, Ջավախքի եւ Երեւանի բուժհաստատությունների հետ: Իսկ ֆինանսական աջակցությունը ցուցաբերում է Ամերիկահայ բժիշկների միությունը (AAHPO): Երեկ ՀՕՖ-ի հայաստանյան գրասենյակում ծրագրի շնորհանդեսն էր: ՀՕՖ-ի մամուլի քարտուղար **Լեւոն Լաճիկյանը** սկզբում նշեց, որ ՀՕՖ-ը բժշկական ծրագրերին միշտ էլ առանձնահատուկ ուշադրություն է դարձրել: ՀՕՖ-ը ստեղծվել է 1988-ին՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո ՝ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Կազմակերպության նպատակը հայ ժողովրդին օժանդակելն է: 22 տարիների ընթացքում ՀՕՖ-ը Հայաստանում, Արցախում ու Ջավախքում իրականացրել է շուրջ 300 միլիոն դոլարի ծրագրեր: Դեռ 90-ականներին ՀՕՖ-ն իրականացրել է առողջապահական ծրագրեր, որոնց արդյունքում միլիոնավորներ դոլարների բժշկական սարքավորումներ բերվեցին Հայաստան, աջակցություն ցուցաբերվեց Հանրապետական գիտաբժշկական գրադարանին եւ ավելի քան 90 հայաստանցի բժիշկներ վերապատրաստվեցին Միացյալ Նահանգների ու Կանադայի կլինիկաներում: Հարուստ փորձով ու նոր գիտելիքներով վերադառնալով հայրենիք՝ բժիշկներն այստեղ՝ 2000 թվին հիմնեցին ՀՕՖ-ի բժշկական շրջանավարտների միությունը, որն էլ իր հերթին սկսեց ծավալել բարեսիրական գործունեություն առողջապահության ոլորտում:




Այնուհետեւ, անդրադառնալով «ԼՂՀ ու Ջավախքի բժիշկների վերապատրաստմանը»՝ ՀՕՖ-ի առողջապահական ծրագրերի համակարգող **Համբարձում Սիմոնյանը** նշեց, որ ծրագրի գաղափարը ծնվել է դեռ 2-3 տարի առաջ՝ Նյու Յորքում: Կարելի է ասել ծրագրի «կնքահայրը» ամերիկահայ բժիշկ, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի թեմական խորհրդի փոխատենապետ **Րաֆֆի Հովհաննիսյանն** է, որի խոսքով՝ եղել են մարդիկ, որոնք սկզբում թերահավատորեն են նայել ծրագրին: Դոկտոր Հովհաննիսյանը վստահ է, որ վաղ թե ուշ ծրագրի օգտաշատ լինելու մեջ թերահավատները նույնպես համոզված կլինեն: Իսկ ԼՂՀ-ի առողջապահության փոխնախարար **Ալեն Պողոսյանն** իր խոսքում նշեց, որ արդյունքներն, անշուշտ, տեսանելի կլինեն ավարտից հետո: Լեռնային Ղարաբաղից վերապատրաստվելու են շուրջ 60 բժիշկներ:

Ինչ վերաբերում է ներդրված գումարի չափին, Համբարձում Սիմոնյանը տեղեկացրեց, որ առաջին տարվա համար ներդրումը կկազմի 30 հազար դոլար, որը հնարավորություն կտա վերապատրաստելու 40-45 բժիշկների:

2005 թվականից առ այսօր հաջողությամբ գործում է նաեւ ՀՕՖ-ի «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագիրը:

Ի. Պ.

# Գյումրի-Բավրա բողոքի ավտոերթ

Երեկ առավոտյան շուրջ 200 վարորդ մասնակցել է Գյումրիից Բավրայի մաքսային անցակետ ավտոերթին, այդպիսով բողոքելով ավտոմեքենաների մաքսազերծման նոր պայմանների դեմ, որը տեղի է ունեցել 2010 թվականի դեկտեմբերին ընդունված օրենսդրական փոփոխություններից մեկով: Ավտոերթին մասնակցել են «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչներ (Ռուբեն Հակոբյան, Ստեփան Սաֆարյան, Արմեն Մարտիրոսյան, Զարուհի Փոստանջյան), ԺԿ նախագահ Տիգրան Կարապետյանը, տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ոստիկանների հարուցած խոչընդոտների պատճառով արթիկցի վարորդները չեն կարողացել միանալ երթին: Բավրայում ավտոերթի մասնակիցները կարճատեւ պիկետ են արել, այնուհետեւ Գյումրի վերադառնալով միացել են Թատերական հրապարակի ինքնաբուխ հանրահավաքին, որտեղ ելույթ են ունեցել վերը նշված քաղաքական գործիչները:

Մ. Խ.

# Արման Սարգսյանն ու Երիտասարդականի 1000 անդամ

Երեկ Հայաստանի նախկին երիտասարդական կուսակցության 1000 անդամների անունից հայտարարություն է տարածել «Արցախ» ակումբի նախագահ **Արման Սարգսյանը**, թե իրենք չեն ցանկանում միանալ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը եւ ուզում են, որ իրենց նախագահը դառնա Հայաստանի երիտասարդական կուսակցության նախկին նախագահ Սարգիս Ասատրյանը, եթե վերջինս ցանկանա: Իսկ իրենք պատրաստվում են բողոքի ակցիա կազմակերպել՝ պահանջելով Վահան Բաբայանի հրաժարականը: ԲՀԿ-ի շուրջ տեղի ունեցող խմորումների ֆոնին սա հետաքրքրական է, միայն թե չգիտենք՝ այդ 1000 անդամն, իրոք, ստորագրե՞լ են այդ հայտարարության տակ:

Մ. Խ.

# Աբգար վարդապետ Հովակիմյանը՝ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ

**Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի տնօրինությամբ Բուլղարիայի հայոց թեմում որպես առաջնորդական տեղապահ ծառայության է կոչվել Աբգար վարդապետ Հովակիմյանը: Սովորել է Մայր աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում՝ պաշտպանելով ավարտաճառ «Հայ դավանաբանական մտքի արձագանքները Ներսես Շնորհալու «Մասթեոսի ավետարանի մեկնության» մեջ»:**

**1995 թ. ձեռնադրվել է սարկավագ, 1996-ին՝ կուսակրոն քահանա: 2004-ին Վեհափառի տնօրինությամբ նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: 2007-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ» թեմայով եւ արժանացել վարդապետության աստիճանի: 2010-ին հովվական ծառայության է անցել Մոնրեալում (Կանադայի հայոց թեմ):**

Հ. Հ.

# Յուրաքանչյուր սպանված գայլի համար՝ 100 հազար դրամ

100 հազար դրամ պարգեւավճար է սահմանել կառավարությունը յուրաքանչյուր ոչնչացված գայլի համար: Այս որոշումն ընդունվել է՝ նկատի ունենալով վերջին տարիներին գայլերի թվաքանակի աճը: Այդ նպատակով բնապահպանության նախարարությանը հատկացվել է 10 մլն դրամ:

Ա. Մ.

# Կառավարությունը տույժեր կվճարի ԱԱՀ գերավճարը ուշացնելու դեպքում

Ինչպես նշել էինք մեր թերթի նախորդ համարում, կառավարությունը երեկ հաստատեց գերավճարների հետվերադարձն ուշացնելու դեպքում տույժերի վճարման կարգը: Խոսքն այն մասին է, որ կառավարությունը սրանով պարտավորվում է գերավճարների հետվերադարձն օրենքով սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում տնտեսվարողներին վճարել տույժեր: Հարցին անդրադարձավ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, ասելով, որ կառավարությունը խիստ կարեւորում է այս որոշումը: Նա նաեւ հայտնեց, որ վերջին 2 տարում ուշացման եւ առավել եւս չվճարման դեպքեր չեն եղել, ինչը կբացառվի նաեւ ապագայում:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## Ի վնաս եւ հօգուտ բուժաշխատողների՝ համավճարը բարձրացնում է աշխատավարձը, բայց «վերացնում» ստվերը

Փետրվարի 1-ից հանրապետության բոլոր հիվանդանոցներում ներդրվել է համավճարի համակարգը: Առողջապահության նախարարության առողջապահական պետական գործակալության պետ **Արա Տեր-Գրիգորյանը** երեկ «Դե ֆակտո» ակումբում նշեց, որ ծրագիրը շուրջ 6 ամիս փորձարկվել է Երեւանի 3 բուժհաստատություններում: Այնուհետեւ ՀՀ վարչապետի մոտ՝ ընդլայնված նիստի ժամանակ քննարկվել են նախնական արդյունքները: «Քանի որ գոհացուցիչ էին արդյունքները, որոշեցինք ընդլայնել ծրագիրը՝ ներառելով մյուս բուժհաստատությունները», ավելացրեց Արա Տեր-Գրիգորյանը: Մինչ համավճարի ծրագրի ընդլայնված կիրառումը կառավարությունը որոշում է ընդունել, որի համաձայն համավճարը կիրառվելու է պետական 2 ծրագրերում՝ անհետաձգելի բուժօգնության ու գինեկոլոգիական բուժօգնության: Այս տարի ներդրված ծրագրով՝ բուժհաստատությունների հանձնաժողովներին տրվել է 20 տոկոս զեղչ կատարելու իրավունք:



Մյուս բանախոսը ԱՆ աշխատակազմի նորաշանակ ղեկավար **Սուրեն Քրմոյանն** էր: Նա հայտարարեց, որ մարտ ամսից բուժաշխատողների աշխատավարձերը բարձրացվելու են, որպեսզի բուժաշխատողները զգան, որ բարեփոխումներն ուղղված են նաեւ իրենց սոցիալական վիճակը բարելավելուն: Իսկ Արա Տեր-Գրիգորյանը հավելեց. «Ակնկալում ենք, որ աշխատավարձերը կբարձրանան 50-60 հազարից մոտավորապես մինչեւ 200-250 հազար դրամ»: Բուժաշխատողները ստվերի պայմաններում ամեն օր ունեցել են իրենց եկամուտը, իսկ այսօր զրկվել են դրանից եւ ստիպված են մեկ ամիս սպասել աշխատավարձ ստանալու համար: Արա Տեր-Գրիգորյանը մի տեսակ արդարացնելով, թե խղճալով բուժաշխատողներին՝ ասում է. «Նախարարի հանձնարարությամբ քննարկում ենք, որ բուժաշխատողներին աշխատավարձ վճարվի ամսվա մեջ ոչ թե մեկ, այլ երկու եւ ավելի անգամներ»:

Խոսքն աջ ու ձախ տանելով՝ բանախոսները քիչ թե շատ հասկանալի լեզվով բացատրեցին, թե համավճարի համակարգն ի՞նչ օգուտ կտա հիվանդին: Նախ Արա Տեր-Գրիգորյանը շտապելով նշեց, որ համավճարի ամբողջ գործընթացի խնդիրը եղել է ստվերի վերացումը, հետո բացատրեց. «Օրինակ՝ մարզում վիրահատության դիմաց վճարում էինք 95 հազար դրամ, այս տարի պետական գինը դարձավ 105 հազար դրամ, որին կավելանա 65-85 հազար դրամ համավճարը: 105 հազար դրամը վճարելու է պետությունը»: Շարունակելով բացատրել՝ Արա Տեր-Գրիգորյանն ասաց՝ եթե նախկինում հիվանդը վճարել է մինչեւ 100 կամ 300 հազար, ապա հիմա վճարելու է 65-85 հազար դրամ եւ մի դրամարկղում:

Բանախոսների փոխանցմամբ՝ համավճարի համակարգով ավելի շատ վճարում է պետությունը, ավելի քիչ՝ հիվանդը, որի համար իր ծախսը դառնում է նաեւ ավելի կանխատեսելի:

Ի. Պ.



## Քաղաքական լոբբիզմ, թե՞ քաղաքագիտական վերլուծություն

ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ

**Ամեն անգամ, երբ լուրեր են շրջանառվում, որ Միջազգային ճգնաժամային խումբը պատրաստվում է իր հերթական զեկույցը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին, այնքան աժիոտաժ է առաջանում վերլուծաբանների, փորձագետների շրջանում, որ կարծես թե խոսքը գնում է աներկբա հեղինակություն վայելող, լուրջ, փաստարկված եւ խիստ օգտակար վերլուծության մասին: Բայց ամեն անգամ զեկույցի լույս տեսնելուց հետո ակներեւ են դառնում դրա անլրջությունը, ոչ փաստարկված լինելը եւ անօգտակարությունը, եւ բոլոր կողմերից այն արժանանում է քննադատության:**

**Խմբի վերջին զեկույցում քաղաքագիտական վերլուծությունները եւ փաստերի շարադրումը շաղախված են միակողմանի քաղաքական գնահատականներով եւ սելեկտիվ թվարկումներով: Խումբը այնքան է ցանանում «օբյեկտիվ» երեւալ, որ ամեն կերպ փորձում է հավասարության ծողը պահպանել Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հայտարարություններում, դիրքորոշումներում եւ վարքագծում: Այսինքն, անտեսելով իրականությունը, եւ «ամեն գնով հավասարություն եւ նմանություն» գտնելու մոլուցքով, վերլուծությունը վերածվել է միակողմանի քաղաքական գնահատականի եւ, ըստ էության, զրկվել է որպես օբյեկտիվ եւ օգտակար վերլուծություն ծառայելու հնարավորությունից:**

**Օրինակ, ելնելով ադրբեջանական հայտարարություններից եւ ԶԼՄ-ների տարածած ապատեղեկատվությունից, 2010 թ. Սանկտ Պետերբուրգյան եռակողմ հանդիպումը որակվել է որպես «անբավարար»՝ ընդհանրապես փորձ անգամ չանելով պատկերացում ձեւավորելու, թե ի՞նչ է եղել հանդիպման ընթացքում, ով ի՞նչ է ասել եւ ո՞վ է խախտել իր խոսքը:**

**Կամ, նշվում է շփման գծում 25 զոհվածների մասին, բայց նորից փորձ չի արվում հստակ նշել, թե նրանցից որքանն են ադրբեջանցիները (9) եւ որքան՝ հայերը (16): Հասկանալի է զոհերի գերակշռություն ունեցող կողմն է սովորաբար ագրեսիայի զոհը, եւ ճգնաժամային խմբի վերլուծաբանների աչքից վրիպել է այս կարեւոր դրվագը: Գնահատելով հունիսին շփման գծում ադրբեջանական սադրանքի մասնակից, 4 հայ զինվորների սպանած Մուբարիզ Իբրահիմովի հուղարկավորության հիստերիան, որն իր կազմակերպման սկզբից մինչեւ վերջ հիշեցնում է բեմականացված ահաբեկչություն, խմբի վերլուծաբաններն այն որակում են «հուզումնալից»՝ ընդհանրապես անտեսելով մարդասպանին «շահիդ» հռչակելու սադրիչ որոշումը: Փոխարենը, փորձ է արվում հավասարության նշան դնել Ադրբեջանի նախագահի եւ «հայ պաշտոնյաների» հայտարարությունների միջեւ: Համեմատելով Ալիեւի հայտնի հայտարարությունները, թե իբր «ներօրյա Հայաստան պետությունը ստեղծվել է պատմական ադրբեջանական հողերի վրա», խմբի վերլուծաբանները նկատում են, որ «հայ պաշտոնյաները պարբերաբար նման բաներ են ասում Ադրբեջանի եւ Նախիջեւանի ինքնավար մարզի մասին»: Որքան էլ, որ հիմնավոր տարածք է ունեցել Մեծ Հայքը, հայտնի չէ, որեւէ հայ պաշտոնյա, որ երբեւէ ասած լինի, թե Բաքուն հին հայկական քաղաք է, մի բան որն Ալիեւն է անում Երեւանի հասցեին 1918 թ.ից առաջ գոյություն չունեցած իր պետության մասը համարելով:**

Տես էջ 8

## Արցախում գործարարները միավորման խնդիր են դնում

**Արդեն 10 տարի է, ինչ Արցախում տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը հայտարարվել է գերակա ուղղություն, սակայն առ այսօր դրական տեղաշարժեր չկան: Այս մասին հայտարարել է ԼՂՀ տնտեսական զարգացման նախարար Կարեն Եսայանը ՏՀՏ ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ կայացած խորհրդաժողովում: Նախարարը կարեւորել է գործարար միավորումների դերը ժամանակակից բիզնես միջավայրում, որոնք պաշտպանելով մասնավոր հատվածի կոլեկտիվ շահերը, միաժամանակ կարող են նպաստել պետական տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին:**

**Ըստ նախարարի, 2002 թվականին հիմնադրված ԼՂՀ արդյունաբերողների եւ գործարարների միությանը չի հաջողվել իրականացնել իր առաքելությունը, եւ նրա կանոնադրական նպատակները մնացել են չիրագործված: Ժամանակակից կայացած շուկայական տնտեսություններին բնորոշ է բիզնեսի սուբյեկտների կամավոր անդամակցումը տարբեր գործարար միավորումների, մինչդեռ ԱԳՄ պասիվ գործունեության պատճառով Արցախում տնտեսվարող սուբյեկտներն այդպես էլ չեն միավորվել նրա շուրջը:**

**Գործարարների մեկուսացվածությունը խոչընդոտում է նրանց սեփական շահերը համախմբված ներկայացնելուն, նկատել է տնտեսական զարգացման նախարարը, հավելելով, որ կառավարությունը չի կարողանում տեղ հասցնել բիզնեսի հետ համատեղ իրականացվելիք ծրագրերը հենց բանակցային կողմի բացակայության պատճառով: Համատեղ գործելու պարագայում ֆինանսական ռեսուրսներն ավելի մեծ կլինեն, նշել է նա, ուստի միության ստեղծումը հնարավորություն կտա համագործակցությամբ շահավետ ուղիներ գտնել:**

**Խորհրդաժողովի մասնակիցները հավանություն են տվել միություն ստեղծելու գաղափարին: Ընտրվել է խորհուրդ՝ «Ղարաբաղ Տելեկոմ», «Արցախկապ», «Արմինկո», «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» եւ «Իննովա» ընկերությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ: Որոշում է ընդունվել դիմել գործարար շրջանակներին՝ ստեղծելու գործարարների ոլորտային միավորումներ եւ անդամակցել միությանը, անշուշտ պահպանելով իրենց ինքնուրույնությունը:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

## Մշակութային ժառանգության պահպանումը՝ հայ-ռումինական օրակարգում

**Փետրվարի 9-ին Ռումինիայում Հայաստանի դեսպան Համլետ Գասպարյանը հանդիպել է խորհրդարանի Ռումինիա-Հայաստան բարեկամական խմբի հետ, որի կազմում ընդգրկված են ռումինական խորհրդարանի երկու պալատների հիմնական քաղաքական ուժերը ներկայացնող սենատորներ եւ պատգամավորներ: Բարեկամական խմբի նախագահն է պատգամավոր Միհայ Լուպուն: Ըստ ԱԳՆ հաղորդագրության, հանդիպման ընթացքում առանձին ուշադրություն է հրավիրվել խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունների լիարժեք օգտագործմանը, ինչը կարող է, օրենսդրական ոլորտում խորհրդակցությունների եւ փորձի փոխանակմանը զուգահեռ, իր նպաստը բերել տարբեր բնագավառներում համագործակցության խթանմանը: Որպես այդպիսիք նշվել են պատկերոնացված մակարդակով կադրերի զարգացումը, մշակութային ժառանգության պահպանումը, կրթական եւ առողջապահական ոլորտները, տուրիզմը եւ տեղական արտադրության խրախուսումը:**

**Ռումին խորհրդարանականները պատրաստակամությամբ են արձագանքել առաջարկներին:**

Ա. Հ.

## Կոզեռնի բնակիչների բողոքի ցույցը

Կառավարության շենքի մոտ երեկ բողոքի ցույց էին անցկացնում արդեն 8-րդ տարին Երեւանի իրացման գոտի համարվող Կոզեռն թաղամասի բնակիչները: «Պահանջում ենք արդար փոխհատուցում», «Կոզեռնը միասնական է» եւ այլ կարգախոսներով 100-150 բնակիչներ իրենց դժգոհությունն էին հայտնում նախօրեին գնահատող կազմակերպության արված փոխհատուցման գնային առաջարկից: Բնակիչները արդար փոխհատուցում ստանալու իրենց պահանջը հայտնեցին կառավարության նիստից դուրս եկող քաղաքապետ Կարեն Կարապետյանին, որը խոստացավ զբաղվել այդ հարցով:

## Ազգային ժողովում երեկ որոնում էին ԲՀԿ-ին

*1-ին էջից*

### Ի՞նչ «Հացի խնդիր»

Հանրային հեռուստաընկերության գործունեությունը ներկայացնող **Ալեքսան Հարությունյանից** «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր **Անահիտ Բախշյանը** երեկ հետաքրքրվեց, թե Հանրայինն ինչո՞ւ օպերատիվ չի արձագանքում երկրում տեղի ունեցողին՝ որպես օրինակ հիշելով Գագիկ Բեգլարյանի հետ կապված միջադեպը: Ա. Հարությունյանը նկատեց, թե չհաստատված տեղեկություններ հաղորդելը ճիշտ չէ եւ վտանգավոր հետեւանքների է բերում, օրինակ՝ թերթերը դասական քաշքշուկների մեջ են ընկնում, այդ պատճառով Հանրայինը մի քիչ զգուշավոր է: Անահիտ Բախշյանն արձագանքեց, թե թող հանգիստ լինի՝ նրան երբեք դատի չեն տա: ՀՀԿ-ից **Կարինե Աճեմյանը** հետաքրքրվեց «Արարատ» հեռուստաալիքի հետագայով: Ըստ Ա. Հարությունյանի՝ «Արարատի» աշխատակիցները չեն կրճատվի, նրանց վարձատրության փոփոխություն չի լինի, նրա փոխարեն մեկ այլ մշակութային ալիք է ստեղծվելու: Հանրայինին հեռուստաընկերությանը խորհրդարանական ընդդիմությունը մի լավ քննադատության ենթարկեց սերիալների սարսափելի լեզվի եւ անիմաստության, կրթական եւ հայրենասիրական հաղորդումների պակասի, գովազդների տեւողության եւ բազմաթիվ այլ բաների համար: Ի պատասխան Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ պատմական, հայրենասիրական հաղորդումների շարք է պատրաստվում, այժմ նկարահանվում է ֆիլմ նվիրված Խաչատուր Աբովյանին, ավելի ուշ ֆիլմ է նկարահանվելու Պերճ Պռոշյանի «Հացի խնդիրը» վեպի հիման վրա: Լավ, ի՞նչ «Հացի խնդիր» (չէ մի չէ՝ «Սոս եւ Վարդիթեր»), ի՞նչ «Սպանված աղավնի», էս ո՞ւմ ճաշակն է, «Խենթը» նկարեք, «Կայծերը» նկարեք, «Երկիր Նաիրին» նկարեք, «Ռանչպարների կանչը» նկարեք, ի սեր աստծո, հատուկ անարվեստ գործե՞րն եք նկարում:

### Մեկ ուրախ եւ մեկ տխուր լուր՝ գազի սակագնի վերաբերյալ

Ուրախ լուր Ազգային ժողովից. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահը հանգստացրեց հայ սպառողին՝ ապրիլի մեկից գազի սակագնի փոփոխություն չի լինի: Բայց շատ չուրախանաք, քանի որ դա բոլորովին էլ չի նշանակում, թե ընդհանրապես գազի սակագնի փոփոխություն չի լինի. հիմա տխուր լուրը՝ դա կարող է պատահել մեկ կամ երկու ամիս հետո: Իսկ ապրիլի մեկից գազի սակագնի թանկացում չի լինի, քանի որ ըստ հանձնաժողովի կանոնակարգի եւ էներգետիկայի մասին օրենքի՝ սակագինը սահմանվելուց մեկ ամիս հետո պետք է ուժի մեջ մտնի (Ռ. Նազարյանը ներկայացնում էր իր գլխավորած հանձնաժողովի 2011 թվականի ծրագիրը), իսկ «Հայռուսգազարդը» հայտ չի ներկայացրել գազի սակագնի փոփոխության վերաբերյալ: Իսկ թե ի՞նչ տարբեր տարածաշրջանային սխեմաների մեջ մտնելով պետք է էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը զսպի գազի գնի բարձրացման հետեւանքները, դեռ պարզ չէ, պարզ է միայն, որ մի քանի օրից ռուսական «Գազպրոմի» հետ բանակցությունների ընթացքում պարզ կլինի, թե որքա՞ն է թանկանալու գազը... ապրիլի 1-ից չէ, մայիսի 1-ից: Իսկ էլեկտրաէներգիայի սակագինը, ըստ Ռ. Նազարյանի, կմնա նույնը եւ այս տարի գոնե չի փոխվի: Ամենահետաքրքրականն այն էր, որ Ռ. Նազարյանին հարց ուղղողների թվում էր նաեւ Ազգային ժողովի նախագահը, որը հետաքրքրվում էր, թե հնարավոր չէ՞ օրենքն այնպես փոխել, որ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունների շրջանակում հնարավոր լինի պաշտպանել հասարակ սպառողի շահը մատակարար ընկերությունների դեմ բողոքելիս. «Սպառողները միայնակ են մնացել հանրային ծառայությունների մատուցողների դեմ», նկատեց ԱԺ նախագահը՝ առաջարկելով մտածել, թե կարելի՞ է լիազորություն նախատեսել հանձնաժողովի համար՝ աջակցելու քաղաքացիների դիմումներին: Ռ. Նազարյանն էլ պատմեց, որ արդեն իսկ հանձնաժողովը մոտ 140 բողոք ունի բարձր լարման հոսանքից սարքերը շարքից դուրս գալու վերաբերյալ, մի հանձնաժողով է կազմվել ու բողոքներն ուսումնասիրվում են, որոշ դեպքերում փոխհատուցումներ են արվում, ուզում էր ասել՝ բնակիչն այնքան էլ անպաշտպան չէ, բայց եւ խոստացավ այդ ուղղությամբ մտածել:

# Մելգոնյանի դռները փակված են, բայց հարցը փակված չէ

## Հայաստանի նախագահի այցը կարող էր շատ ավելի տպավորիչ լինել

***«Ազգը» ներկայացնում է կիպրահայ հայտնի լրագրող, «Financial Mirror» թերթի հրատարակիչ եւ տնօրեն Մասիս Տեր-Բարթողի հետ հարցազրույցը` Հայաստանի նախագահի կիպրոսյան այցելության, համայնքի դերակատարության, մտահոգությունների, ինչպես նաեւ Մելգոնյան վարժարանի առնչությամբ ներկա իրավիճակի մասին:***

**- Պրն Մասիս, հունվարին Կիպրոս այցելեց Հայաստանի նախագահը: Ի՞նչ տպավորություններ ունեք այցելությունից, եւ արդյո՞ք Կիպրոսի հայ համայնքը գոհ է իրավիճակից:**

- Նախագահ Սերժ Սարգսյանի Կիպրոս այցելությունը երկրորդն էր, առաջին անգամ նա այցելել է որպես պաշտպանության նախարար, գրեթե հինգ տարի առաջ: Կարող եմ ասել, որ իբրեւ պաշտպանության նախարար շատ ավելի տպավորիչ եւ արդյունավետ այցելություն կատարեց, քան հիմա` որպես հանրապետության նախագահ:

Մի կողմից, իր հետ եկել էին տարբեր գործարարներ, գործարար աշխարհի ներկայացուցիչներ: Ինչպես հասկացել եմ, մասնավոր համաձայնություններ կայացնել չի հաջողվել, ինչը, անշուշտ, նախագահի մեղքը չէ: Կարող է` ժամանակն էր անհարմար, կամ Կիպրոսը փոքր շուկա է, կամ Հայաստանի ընկերությունները ուրիշ բան են փափագում եւ Կիպրոսի ընկերությունների հետ չէին կարող համաձայնել: Դրանից բացի, նախագահի այցելությունն ինքնին կարծում եմ կարող էր շատ ավելի տպավորիչ լինել:



Կիպրոսի հայկական գաղութը փոքր է, թվով մեծ չէ, բայց պատմական է, զգալի առավելություններ ունի: Գլխավոր առավելությունն այն է, որ Կիպրոսի կառավարությունը մեծ հարգանք ունի հայկական համայնքի հանդեպ: Հայաստանի նախագահը այցելել էր կարծես Չինաստան կամ ուրիշ մի երկիր, այլ ոչ Կիպրոս: Գաղութն ակնկալիքներ ուներ, որ հանդիպում լիներ: Այդպիսի ակնկալություններ, մտահոգություններ ունեին Կիպրոսի հայ գաղութը, այստեղ ապրող հայաստանցիները: Դա տեղի չունեցավ, միայն մեկ հանդիպում եղավ, այն էլ շատ կարճ` Նիկոսիայում, մեր նախակրթարանի սրահում, նախագահը եկավ, իր խոսքն ասաց ու մեկնեց:

Հաջորդ օրն առավոտյան Հայոց ցեղասպանության հուշարձան էլ շատ արագ այցելեց, սակայն Երեւանը կարծես չի անդրադառնում, որ Կիպրոսը շատ կարեւոր դեր կարող է խաղալ Հայաստանի արտաքին դիվանագիտության պահանջները, կարիքները գոհացնելու առումով:

Ես` իբրեւ լրագրող, իբրեւ գաղութի անդամ, շատ շփումներ ունեմ համայնքի ներկայացուցիչների հետ եւ լավ գիտեմ, թե որոնք են մտահոգությունները: Ես ակտիվորեն զբաղվում եմ գաղութի հարցերով, որոնց ընթացքում էլ տեղեկանում եմ մտահոգությունների մասին: Ուստի կարող եմ ասել, որ ակնկալվում էր, որ նախագահի այցելությունն ավելի տպավորիչ եւ արդյունավետ կլինի:

**- Ինչպե՞ս կարող է Կիպրոսը աջակցել Հայաստանին, կոնկրետ ի՞նչ հարցերում կարելի է ակնկալել այդ աջակցությունը, եւ որքանո՞վ է դա օգտագործվում:**

- Կիպրոսը փոքր լինելով` ավելի դյուրին է շարժվում, ըմբռնում: Կիպրոսը, հայ գաղութը եւս, ԵՄ անդամ լինելով, առավելություններ ունի, որոնց կարիքը Հայաստանը ունի, այսինքն` ունենալու մեկը, որ կկանգնի Հայաստանի կողքին: Նաեւ իբրեւ հայ փոքրամասնություն` ունենք հավելյալ առավելություններ, որ շատ տեղերում չունենք: Օրինակ, պետության կողմից արեւմտահայերենը պաշտպանվում է որպես փոքրամասնության լեզու, այսինքն` Կիպրոսի պետությունը հայերենը ճանաչում է բոլոր ձեւերով: Իսկ հայոց լեզվին կցված են մեր մշակույթը, մեր պատմությունը:

Կիպրոսի հույն քաղաքացիները հայերի հետ լավ, եղբայրական հարաբերություններ ունի, քանի որ հստակ են Կիպրոս-Թուրքիա բախումները, եւ հույները իրենց կաշվի վրա են զգացել Թուրքիայի հետ հարաբերությունների ցավը եւ հասկանում են հայերի ցավը:

Այլ հարցեր էլ կան, որոնց առումով Կիպրոսի հայ համայնքը առավելություններ ունի Կիպրոսում, ընդ որում, Կիպրոսի կառավարությունը միշտ աշխատում է առավելագույնս օգտակար լինել հայ գաղութին: Այո, դիվանագիտությունը կարեւոր է, բայց եթե Երեւանը հարկ եղածի չափ կարեւորություն չտա հայ գաղութին, Կիպրոսի հույն պետությունն էլ հարկ եղածի չափ չի ցույց տա հարգանք եւ օժանդակություն: Կիպրոսն իր փոքր ուժերով կարող է օգտակար լինել Եվրոմիության մեջ հայերին ու Հայաստանին վերաբերող հարցերում, հատկապես որ ԵՄ-ում Հայաստանը ձայն չունի: Հունաստանը եւս կարող է աջակից լինել Հայաստանին, բայց ինչպես մեզ սովորեցրել են պատմության ուսուցիչները, Հունաստանը եւ հույները հեռատես չեն, եւ հույս դնելը դժվար է: Կարծում եմ, փոքր Կիպրոսը կարող է շատ ավելի օգտակար լինել Հայաստանին:

**- Ներկայումս ինչպիսի՞ն է Կիպրոսի հայ համայնքը, ի՞նչ մասշտաբներ եւ ազդեցություն ունի;**

- Կիպրոսի հայ համայնքը հիմա մոտ 3000 է` Կիպրոսի 900 հազարանոց հույն համայնքի կողքին, հիմնականում կենտրոնացած է քաղաքներում` Նիկոսիա, Լառնակա եւ Լիմասոլ: Որոշ տվյալներով, կան նաեւ մոտ 1000 եկածներ Հայաստանից, որ չեն վերադարձել: Մենք նրանց մասին տեղեկանում ենք, երբ որոշ ժամանակ նրանք արդեն ապրում են Կիպրոսում եւ, ասենք, մտածում են երեխաներին ուղարկել հայկական վարժարան կամ կարիքներ ու դժվարություններ ունեն:

Հայ համայնքը Կիպրոսում փոքր է, բայց զբաղվում է գրեթե բոլոր հարցերով, ներկայություն ունի հասարակության բոլոր շերտերում` կուսակցություններից մինչեւ գործարար շրջանակներ: Այս տարի մայիսին խորհրդարանական ընտրություններ կան, որոնց էլ կմասնակցեն նաեւ հայեր` ազդեցիկ կուսակցությունների հետ: Ընդհանրապես ավելի շատ հայերը բիզնեսով են զբաղվում, դա ավանդաբար այդպես է, քանի որ շատերը պատմական Հայաստանից են եկել, ջարդերից փախչելիս, եւ այն ժամանակ մտել են առեւտրի մեջ: Կան երկրորդ, երրորդ սերնդի գործարարներ, կան փոքր թվով մտավորականներ:

Գաղութն ընդհանրապես կենտրոնացած է դպրոցի եւ եկեղեցու շուրջը, ունենք նաեւ պետական ներկայացուցիչ, որը բացառություն է Եվրոպայում, որովհետեւ Կիպրոսի սահմանադրության մեջ հստակորեն ասված է, որ հայերի հետ եւս երկու փոքրամասնություններ, խորհրդարանում անդամ ունենալուց բացի, իրավունք ունեն ունենալու նաեւ պետական ներկայացուցիչ, որը ճանաչվում է որպես ոչ իբրեւ փոքրամասնություն, այլ կրոնական համայնք: Խորհրդարանում էլ ներկայացուցիչը թեեւ, ընդհանուր առմամբ, իրավունք չունի ժողովներին քվեարկելու, բայց կարող է քվեարկել բոլոր այն հարցերում, որ վերաբերում են հայ գաղութին:

**- 2005-ից փակ է Կիպրոսում եւ աշխարհում հայտնի Մելգոնյան վարժարանը: Ի՞նչ իրավիճակ է հիմա այս հարցի առնչությամբ եւ ի՞նչ սպասումներ կան:**

- Վերաբացման փորձեր արվել են, բայց միակողմանի: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը չի ցանկանում բացել դպրոցը, քանի որ տեսնում է, որ Մելգոնյան վարժարանը մեծ հարստություն է, մեծ կալվածք է, որ մեծ արժեք ունի, եւ ուզում է շահագործել որպես բիզնես, այսինքն` ուզում է վաճառել: Որեւէ մեկը չի կասկածում, որ ՀԲԸՄ-ն իրավունք ունի իր ուզած ձեւով օգտագործելու իր սեփականությունը, բայց Կիպրոսի պարագայում մենք ասում ենք, որ սա ազգային հարստություն է: Արդեն իբրեւ Մելգոնյանի փակման հետեւանք, Կիպրոսի հայ գաղութը, կասեի, անկում` չէ, բայց դժվարություններ ունի, մշակութային կյանքում մեծ պակաս կա այն դեպքում, երբ առաջ շատ հարուստ կյանքով էր ապրում:

Բացի դրանից, տարբեր տեղերից գալիս էին աշակերտներ, շատերը վերադառնում էին իրենց երկիրը` ավելին իմանալով Կիպրոսի, նաեւ Եվրոպայի մասին: Նրանց մեջ էլ մշակվում էր հայկական ոգին, ինչը հիմա այլեւս անհնար է անել: Փոքր-ինչ այդ հարցը լուծում է «Նարեկ» վարժարանը, բայց այն նախակրթարան է, ունի միայն երեք դասարան, որոնք փոքր են, եւ հնարավոր չէ փոխանցել համայնքին այն նույն աշխատանքը, ինչ արվում էր Մելգոնյան վարժարանի միջոցով: Բացի դրանից, պատմական առումով, Մելգոնյանով մոտավորապես 2500 աշակերտ է անցել, ու ցրված են աշխարհով մեկ: Կիպրոսի գաղութի փոքրիկները գնում են «Նարեկ» նախակրթարան` 6-12 տարեկան: Մեր երեք վարժարաններում մոտ 160 աշակերտ կա, որոնցից միայն 12-ն են շարունակում միջնակարգ դասարաններ:

**- Ինչպիսի՞ն կարող է լինել Մելգոնյան վարժարանի ապագան:**

- Մելգոնյանի դռները փակված են, բայց մեզ համար հարցը փակված չէ: Մենք շատ անգամ դիմել ենք Կիպրոսի կառավարությանը, որը պատրաստակամ է որեւէ նոր ծրագիր իրականացնելու Մելգոնյանում կամ դրանից դուրս: Հայերն ինչ ուզեն, Կիպրոսի պետությունը միշտ աջակցել է` թե՛ ֆինանսական, թե՛ այլ առումով: Հիմա նոր կազմակերպություն կա` «Այբ» հաստատությունը, որը Երեւանում 2011-ի սեպտեմբերին վարժարան է բացելու: Այդ կազմակերպությունում գտնում են, որ սփյուռքում նոր վարժարանի կարիք կա, եւ իրենց առաջարկվել է, որ եթե ցանկանան` դա բացեն Կիպրոսում, որտեղ արդեն իսկ պատմություն կա այդ վարժարանի. Մելգոնյանը համբավ եւ հեղինակություն ունի: Նրանք էլ կարծես փորձում են ՀԲԸՄ-ի հետ կապեր հաստատել, եւ հուսով եմ, որ մի կողմ կդրվեն մեր բախումները Բարեգործական միության հետ, եւ միասին կնայենք դեպի ապագան:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նիկոսիա-Երեւան

ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Սոչիի «Սեւան» հայկական համայնքը ընտրեց նոր նախագահ

**Սոչիի «Սեւան» հայկական համայնքը քսան տարվա պատմություն ունի: 2009 թվականի նոյեմբերին Սոչիի հայերը մեծ շուքով նշեցին «Սեւանի» 20-ամյա հոբելյանը: Իսկ նույն թվականի մարտին համայնքի ներկայացուցիչները իրենց ձայնը տվեցին նախկին զինվորական, այժմ Մեծ Սոչիի քաղաքապետի ազգային գծով խորհրդատու Հակոբ Քոչքոնյանին: Վերջինս ղեկավարում էր Ռուսաստանի հայերի միության տեղային տարածաշրջանը 2000 թվականից ի վեր եւ այս տարվա փետրվարին պետք է նշեր իր նախագահության 10-ամյակը: Սակայն պարոն Քոչքոնյանը անսպասելիորեն երկուսուկես տարի շուտ հանձնեց իր պաշտոնը տնտեսական գծով փոխնախագահի, ձեռնարկատեր ու բարեգործ Հրաչ Մակեյանին:**

**Հունվարի 29-ին տեղի ունեցած հաշվետու-ընտրական ժողովի ժամանակ Հրաչ Մակեյանը միաձայն ընտրվեց Սոչիի «Սեւան» հայկական համայնքի նախագահ, որը, որպես հասարակական կազմակերպություն, մտնում է ՌՀՄ-ի կազմի մեջ:**

**Անցյալ տարի Սոչիի հայկական համայնքը արժանացել էր բարձրագույն կոչման` ՌՀՄ-ի նախագահ Արա Աբրահամյանի կողմից պարգեւատրվելով «Ռուսաստանի Դաշնության լավագույն հայկական հասարակական կազմակերպություն» գավաթով: Հակոբ Քոչքոնյանը բարձր ծափահարությունների ներքո հանձնեց դափնին Հրաչ Մակեյանին:**



Հրաչ Մակեյան

**Նորընտիր նախագահը ելույթ ունեցավ ներկաների առջեւ: Իր ծրագրի առանցքային հիմնախնդիրներից կարեւորագույնը Հրաչ Մակեյանը համարում է Մայր Հայաստանի հետ Սոչիի հայկական համայնքի կապի ու համագործակցության ամրապնդումը: Այլ ազգերի հետ ուծացման վտանգից խուսափելու ճանապարհին հարկավոր է ուժեղացնել հայագիտական առարկաների դասավանդման մեթոդները, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, դարավոր մշակույթի լավագույն օրինակների քարոզումն ու տարածումը: Այս նպատակների իրականացման համար հարկավոր է ամբողջ Սոչիի տարածքով մեկ ավելացնել կիրակնօրյա դպրոցների քանակը, զարգացնել բոլոր այն կրթօջախների ընդհանուր մակարդակը, որտեղ դասավանդվում են հայագիտական առարկաներ, հայկական երգերաժշտություն, պարարվեստի ու կերպարվեստի հիմնություններ:**

**Մեծ տեղ տվեց զեկուցողը Հայ առաքելական եկեղեցու նշանակությանը պանդխտության գիրկն ընկած հայորդու անհատականության ձեւավորման ու հոգեւոր զարգացման ճանապարհին: Սոչիում եւ Ադլերում գործում են հայկական Սուրբ Խաչ եւ Սուրբ Սարգիս եկեղեցիները, որոնք ամենայն հետեւողականությամբ ու բծախնդրությամբ հետեւում են բոլոր եկեղեցական ծեսերին, տոներին, միջոցառումներին ու այցելուների հետ պահպանում են անմիջական ու ջերմ հարաբերություններ: Այս տարի սկսվում են Սոչիի նոր եկեղեցու շենքի կառուցման աշխատանքները, որոնք պլանավորված է ավարտել մինչեւ 2014 թվականի ձմեռային օլիմպիական խաղերի սկիզբը:**



**Համայնքի կազմավորման ու գործունեության հիմնախնդիրներից կարեւորագույնը, թերեւս, բարեգործական ակցիաների ու միջոցառումների կազմակերպումն է: Նորընտիր նախագահն ու նախագահության խորհրդի անդամները իրենց առջեւ նպատակ դրեցին մշտական նյութական օգնություն ցույց տալ բոլոր չքավոր, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամ երեխաներին ու ծերերին, փնտրել եւ գտնել տաղանդավոր մարզիկներին ու երիտասարդներին եւ օգնել նրանց զարգացնելու իրենց տաղանդը: Իսկ այս բոլոր նպատակներն ու պլանները կյանքի կոչելու համար տնտեսական հարուստ բազիս է պետք ստեղծել, որն էլ ձգտում է իրականացնել Հրաչ Մակեյանը իր նորընտիր աշխատակազմի հետ մեկտեղ:**

**Հրաչ Մակեյանն Մեծ Սոչիի առաջադեմ ու հեղինակավոր ձեռնարկատերերից մեկն է: Ունի իր սեփական շինարարական ընկերությունը, որն զբաղվում է բազմահարկ բնակարանների կառուցումով: Նրա նպատակներից մեկը մանկատուն կառուցելն է:**

**«Ես ցավով նկատում եմ, որ մեր ազգի ներկայացուցիչներն էլ ընկնելով ծայրահեղ անելանելի վիճակի մեջ` իրենց մանուկներին մանկատուն են հանձնում: Առաջ հայերը ինչ պայմաններում էլ ապրեին, երեխաներին նման հիմնարկություններ չէին տալիս: Իսկ այժմ հակառակ երեւույթն է նկատվում: Այդ պատճառով ես նպատակ ունեմ հարմարավետ ու մեծ տուն կառուցել լքված ու ճակատագրի քմահաճույքին հանձնված մանուկներին ապաստան տալու ու դաստիարակելու համար», ասում է Հ. Մակեյանը:**

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
Սոչի

# Ի՞նչ են ակնարկում

## *Բաքվում «խաղեր են տալիս» ԱՄՆ-ի դեմ*

1news.az-ը, որ անառարկելիորեն Իլհամ Ալիեւի կառավարության «ՏԱՍՍ»-ն է, անդրադարձել է Washington Post-ի այն հրապարակմանը, որտեղ, ըստ ադրբեջանական վերլուծաբանի, թերթը Սպիտակ տան ուշադրությունն է հրավիրել «ոչ ժողովրդավարական գործընկերների հետ հարաբերությունների մասին իր նկատառումների վրա»:

Խնդիրն այն չէ, որ ադրբեջանական լրատվամիջոցը «մոռացել է» ամերիկյան պարբերականի վերաբերմունքն առ Իլհամ Ալիեւ: Ոչինչ, փոխարենն այդ մասին գրել է ռուսաստանյան Regnum գործակալությունը: Եվ մենք գիտենք, որ Washington Post-ը փաստորեն զուգահեռ է անցկացրել Հոսնի Մուբարաքի եւ Իլհամ Ալիեւի միջեւ:

Ավելի էական է, որ ադրբեջանցի վերլուծաբանը, որ հանդես է եկել 1news.az-ի «խմբագրության» անվան տակ, իր դատողությունները խստորեն կառուցել է OPT-ի Միխայիլ Լեոնտեւի՝ նույն թեմայով նախօրեին արված մեկնաբանության այն հիմնական եզրահանգման վրա, որ «արմատական իսլամականությունը պատերազմ է»:

Երբ ռուսաստանցի լրագրողը Միացյալ Նահանգներին կշտամբում է «գունավոր հեղափոխություններ արտահանելու» կամ «արաբական աշխարհի կայունությունը խախտելու» համար, ամեն ինչ հասկանալի է. աշխարհի ուժային կենտրոնների միջեւ մրցակցությունը շարունակվում է: Այս պարագայում բառեր եւ ձեւակերպումներ ընտրելիս մեկնաբաններն այնքան էլ իրենց նեղություն չեն տալիս: Ինչպես օրինակ՝ ադրբեջանական լրատվամիջոցները, երբ խոսում են Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի մասին:

Արտառոցն այն է, որ Բաքվում «խաղեր են տալիս» Միացյալ Նահանգների դեմ: «Գործնականում բոլորին, այդ թվում՝ իսլամականներին եւ նույնիսկ սիոնիստներին պարզ է, թե դեպի ուր է գնում Եգիպտոսը, նրա հետ էլ՝ ողջ Մերձավոր Արեւելքը՝ արմատական իսլամականներն ավելի մեծ հնարավորություն ունեն իրենց ձեռքում պահելու իշխանությունը», Լեոնտեւի միտքն իրեն է վերագրում ադրբեջանական լրատվամիջոցի «խմբագրությունը» եւ ամփոփում. «Ժամանակն է, որ ԱՄՆ-ը մտորի սեփական սխալների մասին»:

Գուցե սույն գրագողությունն ուշադրության չարժանանար, եթե ադրբեջանական մեկ այլ լրատվամիջոց՝ Pia.az-ը, նույն օրը չգրեր, որ «պաշտոնական Բաքուն Միացյալ Նահանգներին կոպտ դեմք է ցուցադրում»: Նման եզրահանգման սույն լրատվամիջոցը եկել է պաշտոնական այն տեղեկատվության հիման վրա, որ Բաքվում ԱՄՆ նորանշանակ դեսպան Բրայզային առաջինն ընդունել է ոչ թե Իլհամ Ալիեւը, ինչպես որ եղել է նախկին դեսպանների պարագայում, այլ՝ արտգործնախարար Մամեդյարովը, ում էլ Բրայզան հանձնել է հավատարմագրի պատճենը:

Pia.az-ը ենթադրում է, որ պատճառն ամերիկյան մամուլում Իլհամ Ալիեւի հասցեին հնչեցված քննադատությունն է՝ ըստ ամենայնի նկատի ունենալով Washington Post-ի վերոհիշյալ հրապարակումը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ իշխանության խոսափող լրատվամիջոցի «խմբագրությունը» հատուկ ընդգծում է, որ Washington Post-ն «ընտրություններում սատարել է Օբամային»: Այսպիսով, կարծես, ակնարկվում է, որ այդ թերթն արտահայտում է ամերիկյան ներկա կառավարության տեսակետները: Սա՝ ընդունված ձեւակերպմամբ: Ադրբեջանի պարագայում, մինչդեռ, բացառված չէ, որ երեւույթն ընկալված լինի որպես «վարչակազմի պատվեր»:

Այսինքն, Բաքվում ակնհայտորեն մտածում են, որ Օբամայի կառավարությունը տեղեկատվական նրբաասացությամբ «մտադրվում է խախտել նաեւ Ադրբեջանի կայունությունը»: Մի՞թե պատահական է, որ հատկապես այս օրերին է Իլհամ Ալիեւը դիմել հանրությանը եւ հորդորել, որ իրեն «անմիջապես տեղյակ պահեն հակաօրինականության ամեն մի փաստի մասին»:

Պարզորոշ զգացվում է, որ Ադրբեջանում իշխող կլանի պարագլուխն անհանգստացած է «սոցիալական խռովության» հեռանկարից: Այն կարող է պայթել ամեն պահի, ամեն առիթով: Օրերս ոստիկանությունը չի համարձակվել կանխել Բաքվի «Գանլի գյոլ» կոչվող թաղամասում ապօրինի բնակարաններ կառուցած «բռնատեղահանվածների» ցույցն ընդդեմ արտակարգ իրավիճակների նախարարի, որն, ըստ տեղեկությունների, մտադիր է դասական կարգով քանդել «նախալստրո»-ի տները եւ տեղում կառուցել շքեղ հյուրանոցային համալիր:

Այլ իրավիճակում իշխանությունը գործի կդներ բռնաճնշման մեքենան: Այսօր զգուշանում եւ անգամ ցուցարարների մոտ է ուղարկում Բաքվի գործադիր իշխանության ղեկավարի տեղակալին, որը մարդկանց հորդորում է «ցրվել տները եւ հանգիստ մնալ»: Առայժմ:

Իսկ իշխանության պատվերը կատարող լրատվամիջոցները, ԱՄՆ կառավարությանը «խորհուրդ տալով մտածել սեփական սխալների մասին», բացահայտորեն ակնարկում է, որ «Իլհամ Ալիեւի միակ այլընտրանքը արմատական իսլամականներն են: Իսկ արմատական իսլամականությունը պատերազմ է»:

Ակնարկը՝ ակնարկ: Բայց ԱՄՆ-ն ա՞յն երկիրն է, որ ադրբեջանական լրատվամիջոցի ակնարկն «ի գիտություն ընդունի»: Հազիվ թե:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Կիպրացի թուրքերը պատրաստվում են նոր հանրահավաքի մարտի 2-ին

*1-ին էջից*

**Եթե որեւէ հարց օրակարգային է դառնում, ապա ինքնաբերաբար վերանում է դրա քողարկման անհրաժեշտությունը: Այս պայմաններում թուրքական թերթերին այլ ելք չէր մնում, քան անդրադառնալ հանրահավաքին ըստ վարչապետ Էրդողանի ելույթի ենթատեքստի: Հարկ է սակայն նշել, որ նրանց անդրադարձը հանրահավաքի մասին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չէր տալիս: Միաժամանակ անհասկանալի էր մնում ցուցապաստառների մակագրության բովանդակությունը: Ի տարբերություն թուրքական թերթերի, մանրամասն էր կիպրացի թուրքերի մամուլի անդրադարձը:**

**Պարզվում է, նախքան հանրահավաքը արհեստակցական 32 միությունների մասնակցությամբ ձեւավորված պլատֆորմը հունվարի 11-ին անժամկետ, իսկ հունվարի 28-ին համընդհանուր գործադուլ է հայտարարել Կիպրոսի թուրքական հատվածում, որն առ այսօր շարունակվում է: Ավելին, փետրվարի 7-ին նույն պլատֆորմի աջակցությամբ կիպրացի թուրքերը բողոքի ցույց են կազմակերպել Թուրքիայի դեսպանատան առջեւ եւ դատապարտել են Էրդողանի կոշտ արձագանքը հանրահավաքին: Նույն օրը արհմիությունները գործադուլը շարունակելու վճռականություն են հայտնել, իսկ հաջորդ օրը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ գումարված ընդլայնված նիստում որոշել են մարտի 2-ին նոր հանրահավաք կազմակերպել:**

**Սա նշանակում է, որ հունվարի 28-ի հանրահավաքի հետ Անկարայի օրակարգում կհայտնվի կիպրացի թուրքերի՝ Թուրքիայի դեմ ուղղված գործունեության հարցը եւ դա կամրապնդվի այնտեղ: Եթե որեւէ հարց օրակարգային դառնալուց հետո շարունակում է մնալ որպես այդպիսին, ապա անհամեմատ լուրջ է, քան ենթադրում կամ մտածում են: Որքան էլ Անկարայում փորձեն Թուրքիայի հետ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հակասությունները պայմանավորել փոխադարձ վիրավորանքներով, իսկ արհմիությունների շարունակվող գործադուլն այնտեղ՝ Անկարայի ներկայացրած տնտեսության կայունացման փաթեթով, որը խնայողություն է ենթադրում, կիպրացի թուրքերի խնդիրը վարչապետ Էրդողանի կառավարությունը չէ, ոչ էլ ներկայացված փաթեթը, այլ Կիպրոսի միասնականության խախտումն ու կիպրական հիմնահարցի չկարգավորվածությունը՝ պայմանավորված Թուրքիայի միջամտությամբ եւ կղզում թուրքական զորքերի առկայությամբ:**

**Այլ կերպ, կիպրացի թուրքերը դեմ են Թուրքիայի միջամտությանն ու Կիպրոսում թուրքական զորքերի ներկայությանը: Սա կնշանակի՝ նրանք անվստահությամբ են վերաբերվում Թուրքիային եւ թուրքական զորքերին, իսկ 1974-ին թուրքական զորքերի ներխուժումից հետո Թուրքիայից Հյուսիսային Կիպրոս փոխադրված թուրք վերաբնակների հետ հետզհետե սրվող հարաբերությունները խորացնում է այդ անվստահությունը, որի արտահայտությունն են դառնում ցուցապաստառներում արտահայտված հայհոյանքն ու վիրավորանքները:**

**Թուրքիայի, թուրքական զորքերի եւ թուրք վերաբնակների նկատմամբ կիպրացի թուրքերի վերաբերմունքի առումով հատկանշական են ցուցապաստառների հետեւյալ մակագրությունները. «Էդ մեզ ազատագրե՞լ ես, ռադդ քաշիր» (բառացի՝ ս.... եղիր), «Վերաբնակեցման օրենքի հեղինակներին էլ, կիրառողներին էլ...», «Անկարա՛, սա նախազգուշացում է, ոչ քո փողը, ոչ տնտեսական փաթեթը, ոչ էլ պաշտոնյաները», «Մեծարգո դեսպան, զսպիր քո քաղաքացիներին» (նկատի ունի վերաբնակներին), «Այշեի փողը պրծավ, սկսեց գողությամբ զբաղվել արձակուրդի վայրում», «Այշե, տուն վերադարձիր, տոմսդ մենք գնել ենք», «Միացյալ Կիպրոս»:**

**Քանի որ կիպրացի թուրքերին հույների «բռնությունից» ազատել է Թուրքիան, ուստի «ս... եղիր» արտահայտությունը վերաբերում է Թուրքիային, իսկ Այշեն խորհրդանշում է կղզում տեղակայված թուրքական բանակն այն առումով, որ 1974-ի հուլիսին, նախքան թուրքական զորքերի Կիպրոս ներխուժումը, Թուրքիայի արտգործնախարար Թուրան Գյունեշը Լոնդոնում բանակցություններ վարող վարչապետ Բյուլենթ Էջեւիթին մոտալուտ ներխուժման մասին զգուշացնելու համար ուղարկել էր գաղտնագրված հետեւյալ հեռագիրը. «Այշեն կարող է արձակուրդ գնալ»:**

***ԿԱՀԻՐԵ-ՎԱՇԻՆԳՏՈՆ***

# Եգիպտոսի ԱԳ նախարարը ԱՄՆ-ին մեղադրեց «կամքի պարտադրման» մեջ



**Եգիպտոսի արտգործնախարար Ահմեդ Աբուլ-Գեյթը հանրապետությունից անհետաձգելի բարեփոխումներ պահանջող ԱՄՆ-ին մեղադրել է «սեփական կամքի պարտադրման» փորձերի մեջ: Ամերիկյան PBS հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նա քննադատել է ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենին, որը Եգիպտոսի փոխնախագահ Օմար Սուլեյմանին կոչ էր արել նշանակալի վերափոխումներ իրականացնել երկրում:**

**Պատասխանելով այն հարցին, թե Բայդեն-Սուլեյման հեռախոսազրույցը նպաստե՞լ է արդյոք Եգիպտոսում քաղաքական ճգնաժամի կարգավորմանը, Աբդուլ-Գեյթը կտրուկ ասել է՝ բնավ ոչ:**

**«Երբ դուք՝ ամերիկացիներդ, խոսում եք Եգիպտոսի նման մեծ եւ ձեզ հետ հիանալի հարաբերություններ ունեցող երկրում արագ եւ անհետաձգելի փոփոխությունների անհրաժեշտության մասին, դուք դրանով իսկ նրան պարտադրում եք ձեր կամքը... Մենք արդեն փոխվում ենք», հայտարարել է Եգիպտոսի արտգործնախարարը:**

**Աբուլ-Գեյթը նաեւ նշել է, որ արտակարգ դրությունը վերացնելու ամերիկացիների պահանջը անիրագործելի է թեկուզ այն պատճառով, որ զանգվածային անկարգությունների օրերին եգիպտական բանտերից փախել են 17 հազար կալանավորներ: «Ինձ ժամանակ տվեք, հնարավորություն տվեք վերահսկողության տակ առնելու եւ կայունացնելու երկրի իրադրությունը, եւ միայն դրանից հետո մենք կզբաղվենք տվյալ հարցով», ասել է նա:**

**Ի պատասխան PBS-ի լրագրողի այն հարցին, թե սկսված անկարգությունները արդյո՞ք անակնկալ էին Եգիպտոսի իշխանությունների համար, նախարարն ասել է, որ դրանք անակնկալ դարձան «ամենքի համար»:**

# Բեն Լադենն այլեւս թիվ 1 ահաբեկիչ չէ



**ԱՄՆ անվտանգության համար առավել մեծ վտանգ է ներկայացնում եմենցի ահաբեկիչ Անվար ալ Ավլաքին, հայտարարել է ԱՄՆ ազգային հակաահաբեկչական կենտրոնի ղեկավար Մայքլ Լեյտերը:**

**Կոնգրեսում ելույթ ունենալով՝ նա պատմել է, որ Ուսամա բեն Լադենի գլխավորած «Ալ Ղաիդայի» պակիստանյան մասնաճյուղը վերջերս զգալիորեն թուլացել է, առաջին հերթին՝ ամերիկյան անօդաչու օդանավերի գրոհների հետեւանքով: Բլումբերգ գործակալությունը մեջբերում է Լեյտերի այն խոսքերը, որ պակիստանյան «Ալ Ղաիդան» ներկայումս ամենաթույլն է վերջին 10 տարվա ընթացքում:**

**Մինչեւ վերջերս աշխարհի թիվ 1 ահաբեկիչ համարվում էր Ուսամա բեն Լադենը, որին վերագրում են 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների կազմակերպումը: ՀԴԲ գործակալների կազմած ցանկում նա առավել որոնվող 10 ահաբեկիչներից մեկն է:**

**Ըստ Մայքլ Լեյտերի, Անվար ալ Ավլաքին եւ եմենյան «Ալ Ղաիդան» առանձնահատուկ վտանգ են ներկայացնում այն պատճառով, որ կարողանում են մարդկանց հավաքագրել նույնիսկ ԱՄՆ տարածքում: Լեյտերը խոստովանել է «նորացումների» ոլորտում Ավլաքիի հաջողությունները, որոնք դժվարացնում են հատուկ ծառայությունների աշխատանքը: Եմենցի ահաբեկիչների առաջնորդը տիրապետում է անգլերենին եւ ինտերնետի հնարավորությունները հմտորեն օգտագործում է սեփական գաղափարների քարոզման նպատակով: «Նա անմիջականորեն խոսում է ԱՄՆ-ում ապրողների հետ», ավելացրել է Լեյտերը:**

**BBC-ի տվյալներով, 2009-ից մինչեւ օրս ԱՄՆ 60 քաղաքացիներ մեղադրվել կամ դատապարտվել են ահաբեկչությունների իրականացման եւ նախապատրաստման հետ կապված գործերով:**

# Դեռահաս մահապարտի ահաբեկչություն Պակիստանի բանակում

Պակիստանի Մարդան քաղաքում բանակի վարժական բազայում երեկ տեղի ունեցած անձնասպանական ահաբեկչության հետեւանքով սպանվել է 31 զինծառայող, 40 ուրիշներ վիրավորվել են: Ոստիկանության տվյալներ վկայակոչելով, BBC-ն հաղորդում է, որ ահաբեկչությունն իրականացրել է դպրոցականի համազգեստով մի դեռահաս: Պայթյունը որոտացել է հրապարակում զինվորականների առավոտյան մարզանքի ժամանակ:

Պայթյունի նախապատրաստման պատասխանատվությունը ստանձնել են Պակիստանի այդ մասում գործող թալիբները: Նրանց ներկայացուցիչ Ազամ Թարիքը Ֆրանսպրեսի թղթակցին ասել է, որ «Թալիբան» շարժումը «հպարտանում է» այդ գրոհով եւ կշարունակի վրեժ լուծել ամերիկյան անօդաչու օդանավերի հարվածների եւ պակիստանցի զինվորականների գործողությունների համար:

Մարդանի ոստիկանապետը պատմել է, որ մահապարտ ահաբեկչի հագին եղել է ռազմակայանի մոտերքում գտնվող Ազիզ Բիհատտի քոլեջի աշակերտի համազգեստ:

Հաղորդվում է, որ պայթյունի զոհերը Պակիստանի բանակի ամենահայտնի ստորաբաժանումներից մեկի՝ Փենջաբյան գնդի մարտիկներ են:

2006-ին նույն վարժական կենտրոնը ենթարկվել էր գրոհի. այն ժամանակ սպանվել էր 20 մարդ:

Թալիբներն ավելի ու ավելի հաճախ են մահապարտների շարքերում ներգրավում երեխաների եւ դեռահասների: BBC-ի տվյալներով, Պակիստանի բանակը երկրի հյուսիս-արեւմուտքում հայտնաբերել է ամբողջ ճամբարներ, որտեղ պատրաստված մահապարտներից ոմանք 10-12 տարեկան են:

# Ժամանակի հրամայականով հրատարակված ժողովածու

***(ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ. Հայագիտության եւ հայապահպանության հարցեր: Հրապարակախոսություն, երկու հատորով, Երեւան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2010, հ. Ա. Հայագիտության հայրենիքը, 480 էջ, հ. Բ. Հայ դատ. հին եւ նոր էջեր, 528 էջ)***

Հայաստանի եւ Սփյուռքի զանգվածային տարբեր լրատվամիջոցներով հայ հասարակայնությանը հուզող հարցերի լուսաբանման ու գնահատման առումով Հասմիկ Գուլակյանի կատարած աշխատանքը եւ արծարծած հիմնահարցերը խիստ արդիական հնչողություն ունեն: Կարելի է վստահորեն ասել, որ վերջին մեկուկես տասնամյակում բառացիորեն չի եղել մեր ազգային շահերը շոշափող եւ ոչ մի կենսական հարց, որին չանդրադառնա Հ. Գուլակյանը: Դրա խոսուն վկայություններն արդեն իսկ ընթերցողի սեփականությունը դարձած «Դարը՝ մեր մեջ, մենք՝ դարի» (4 հատոր, 2006-2007 թթ.) եւ «Ազգայնականություն. ինչո՞ւ է այն անհրաժեշտ» (2008 թ.) ժողովածուներն են:

Բացառություն չէ նաեւ վերջերս երկու հատորով լույս տեսած Հ. Գուլակյանի՝ ՀՀ-ի եւ Սփյուռքի բազմաթիվ պարբերականներում հրատարակված ու նաեւ անտիպ եւ Հայաստանի Հանրային ռադիոյով ու «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի «Վեմ» ռադիոկայանով հնչած (1999-2003 թթ.) թեմատիկ նյութերի ներկայացվող ժողովածում, որտեղ արծարծված են հայոց պատմության նենգափոխումների փորձերին, հայագիտության այլեւայլ հիմնախնդիրներին, Հայ դատին, հայոց լեզվին, մշակույթին եւ, ընդհանրապես, հայապահպանությանն առնչվող հարցեր:




Հայտնի իրողություն է, որ անկախությունից հետո ուժեղացել են հայության դեմ ամեն կարգի ոտնձգությունները, բացահայտ ու քողարկված թշնամիների ողջ ճակատով գրոհը: «Եթե հայ հասարակայնությունը զինված թշնամուն տեսնելու եւ նրա վտանգը գիտակցելու հարցում կարծես թե խնդիրներ չունի,- իրավացիորեն նկատել է գրքի խմբագիր, պատմական գիտությունների թեկնածու **Գեւորգ Յազըճյանը**,- ցավոք, հոգեւոր ոլորտներում հայության թշնամիների նկատմամբ ոչ միայն պատշաճ զգոնություն չի ցուցաբերում, այլեւ հաճախ ի՛նքն է կրում ու բազմացնում ազգակործան տարբեր վարակները, որոնք ավերում են հայոց հոգեւոր արժեքները, հայկական բո՛ւն էությունը» (էջ 5): Ահա դրա դեմ ուղղված, դրա առաջն առնելու եւ արժանի հակահարված տալու խնդիրն է դրված այս ժողովածուի հրատարակումով:

Ժողովածուի Ա հատորը սկսվում է գրքի խմբագիր Գ. Յազըճյանի «Ոչ սովորական մատյան» (էջ 58) բովանդակալից առաջաբանով եւ հեղինակի «Երկու խոսքով» (էջ 910): Հատորը բաղկացած է հետեւյալ խոսուն բաժիններից՝ «Հայագիտության հայրենիքը», «Հայոց ծագումնաբանության հարցեր», «Հայագիտության արդի վիճակը եւ զարգացման հեռանկարները». հայագիտական միջազգային համաժողով», «Հոբելյանը կարելի է «նշել» նաեւ այսպես...», «Մենք եւ հեռուստատեսությունը», «Մեր լեզուն մեր հայրենիքն է». յոթ զրույց թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի հետ», «Խոսք հիշատակի», «Հավելված» (ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի որոշումը ամերիկյան հայագիտության հիմնական միտումների մասին): Հատորում ընդգրկված հայագիտության եւ հայապահպանության կնճռոտ հիմնահարցերին նվիրված հրապարակումների նպատակը մեր կյանքում տեղ գտած հոռի, ազգակործան, ապազգային երեւույթների վրա նաեւ հասարակայնության ուշադրությունը սեւեռելն է:

Այսպես, «Հայագիտության հայրենիքը» խորագրի ներքո ներկայացված են հարցազրույցներ ակադեմիկոսներ Լենդրուշ Խուրշուդյանի, Սերգեյ Աբրահամյանի, Վլադիմիր Բարխուդարյանի, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ Ռիչարդ Հովհաննիսյանի եւ Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի հիմնադիր ու ղեկավար հայր Լեւոն Զեքիյանի, բանասեր Արմեն Պետրոսյանի, «Գիտություն» հրատարակչության տնօրեն Վաչե Հովակիմյանի, պատմաբաններ Արտեմ Օհանջանյանի, Գեւորգ Յազըճյանի, Հասմիկ Ստեփանյանի, գրականագետ Լեւոն Ղազարյանի, հուշարձանագետ Սամվել Կարապետյանի եւ հայտնի այլ անձանց հետ:

«Հայոց ծագումնաբանության հարցերը» խորագրի ներքո ներկայացված են մի շարք մասնագետների՝ բանասեր Արմեն Պետրոսյանի, պատմաբաններ Արտակ Մովսիսյանի, Աշոտ Փիլիպոսյանի, կենսաբան Նվարդ Քոչարի, ժայռապատկերաբան Կարեն Թոխատյանի եւ ուրիշների դիտարկումները, գնահատականները հայերի ծագման հարցերի մասին:

«Հայագիտության արդի վիճակը եւ զարգացման հեռանկարները» հայագիտական միջազգային համաժողովի մասին իրենց կարծիքներն են հայտնել աշխատանքային խմբի համանախագահ, ԵՊՀ պրոռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Արամ Սիմոնյանը, համաժողովի խորհրդի անդամ, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանը, ակադեմիկոսներ Վլադիմիր Բարխուդարյանը եւ Հրաչիկ Սիմոնյանը, «Մարմարա» թերթի խմբագիր, գրող Ռոբեր Հատտեճյանը, աստվածաբանության դոկտոր հայր Մեսրոպ Թոփալյանը, լեզվաբան Դորա Սաքայանը եւ ուրիշներ:

«Մենք եւ հեռուստատեսությունը» խորագրի ներքո Կանադայի Ս. Հակոբ ազգային վարժարանի մանկավարժ Սոսի Գավասյանի, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի, գրականագետ Ազատ Եղիազարյանի, թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի, նկարիչներ Արմինե Կալենցի, Էդվարդ Իսաբեկյանի, Սարո Կալենցի, հաղորդավարուհի Հրաչուհի Ջինանյանի, կինոգետ Դավիթ Մուրադյանի, պատմաբան Բաբկեն Հարությունյանի հետ հարցազրույցներում ներկայացված են վերջիններիս դիտարկումները Հայաստանի ազգային հեռուստատեսության եւ, ընդհանրապես, հեռուստաընկերությունների մասին:

«Խոսք հիշատակի» ենթաբաժնում ընդգրկված են հոդվածներ՝ նվիրված ԵՊՀ դասախոս Լեւոն Ներսիսյանի, անվանի պատմաբան Կոստանդին Խուդավերդյանի, ՀՀ եւ ԼՂՀ 1-ին աստիճանի «Մարտական խաչ»-ի ասպետ, «Ազատագրական բանակի» հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի, Հայաստանի ազգային ռադիոյի հաղորդավար Թադեւոս Բաբայանի, պատմաբաններ Երվանդ Գասպարյանի եւ Հասմիկ Հարությունյանի հիշատակին:

Ժողովածուի Բ հատորը նվիրված է Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին: Հատորում զետեղված են հայ ժողովրդի քաղաքական պատմությանը, հայկական պետականության վերականգնմանը, Հայկական հարցին, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, հայոց պահանջատիրությանը, հայ-թուրքական հարաբերություններին, հայ ազգային-ազատագրական պայքարին առնչվող հրատարակված եւ անտիպ նյութեր: Այս հատորը բաղկացած է երկու բաժնից՝ «Հայկական հարց» եւ «Ազատագրական պայքար»: Վերջինս ունի «Հայոց ազատամարտի պատմությունից», «Զինյալ ազատագրական պայքարի նորագույն փուլը», «Արցախյան ազատամարտ» եւ «Մեր վերազարթոնքի աստղային ժամը» ենթաբաժինները:

Հարուստ, ընդգրկուն եւ բովանդակալից է «Հայկական հարց» խորագրի ներքո զետեղված նյութը: Այնտեղ, մասնավորապես, ներկայացված են Հայոց ցեղասպանությանը նվիրված «Լռության պատ» ֆիլմի պրոդյուսեր եւ ռեժիսոր Դորոթի Ֆորմայի, պատմաբաններ Արմեն Այվազյանի, Հակոբ Չաքրյանի, Ստեփան Պողոսյանի, Ռուբեն Սաֆրաստյանի, Երվանդ Գասպարյանի, Լավրենտի Բարսեղյանի, Աշոտ Մելքոնյանի, Թեսսա Հոֆմանի, հասարակական գործիչներ, «Միություն՝ ընդդեմ ցեղասպանության» հասարակական կազմակերպության (Գերմանիա) անդամներ թրքուհի Սելայ Էրթեմի եւ քրդուհի Դոնեյ Գյունդուզի հետ հարցազրույցներ՝ Մեծ եղեռնի, տարբեր երկրների դիրքորոշումներն այդ, ինչպես եւ հայ-թուրքական հարաբերությունների ու Արցախյան հիմնահարցի վերաբերյալ: Արծարծված հարցերի շուրջ նրանք երբեմն հայտնում են իրարամերժ, մինչեւ իսկ մեզ համար անընդունելի տեսակետներ, որոնք Հ. Գուլակյանը մերժում է՝ հիմք ընդունելով դարերի ընթացքում բյուրեղացած եւ իր կենսունակությունը ապացուցած հայկական ազգային արժեհամակարգը:

Հատորում կան նաեւ այս թեմաներով հրատարակված գրքերի մասին բովանդակալից ու արժեքավոր գրախոսություններ:

Ժողովածուի հատորներն ունեն անվանացանկեր:

Ի դեպ, Հայաստանի ազգային գրադարանում հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած՝ Հ. Գուլակյանի այս ժողովածուի շնորհանդեսին, արժեւորելով կատարված աշխատանքը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանն ասել է. «... Այս գրքի հերոսների զգալի մասը... հայագիտության մեջ եղանակ կարող էին ստեղծել, բայց նույնիսկ խանգարել են հայագիտության զարգացմանը: Հետաքրքիրն այն է, որ Հասմիկը կարողացել է այս մարդկանց մի մասին դարձի բերել» («Հրապարակ», 23. X. 2010):

Հ. Գուլակյանի սույն ժողովածուն մեր օրերում խիստ պահանջված, գրագետ եւ կոկիկ կազմված մի հրատարակություն է, որը, անշուշտ, կգրավի մեր գիտական եւ ընթերցող հասարակայնության ուշադրությունը:

Երկհատորյակի հրատարակությունը հովանավորել են Արմինե Կարապետյան-Կունդուկջյանը (ԱՄՆ) եւ «Էդիտ Պրինտ» հրատարակչության տնօրեն Մկրտիչ Կարապետյանը:

**ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ**
**«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր**

***«ԿԱՅԱՑՈՒՄ»***

# Ոչ խաղարկային էկրան

## *Անկախություն, այդ «քաղցր» բառի գինը...*

**«Կայացում» ոչ խաղարկային լիամետրաժ ֆիլմը ես դիտեցի, երբ հայտնի դարձավ, որ Նյու-Յորք նահանգի Սիրակուզ քաղաքի միջազգային կինոփառատոնում կինոռեժիսոր Գրիգոր Հարությունյանն արժանացել է ռեժիսուրայի համար սահմանված հատուկ մրցանակին:**

**Ռեժիսորի 88-ին նկարահանած «Թատերական հրապարակ» ֆիլմից հետո առաջին անգամն էր, որ դիտում էի Գրիշայի «Կայացում» նոր ֆիլմը: Նախապես ասեմ, որ «Հայկ» կինոստուդիայում նկարահանած նրա «Թատերական հրապարակ» ֆիլմը նույնպես ըստ արժանվույն է գնահատվել միջազգային կինոփառատոներում եւ այսօր պահվում է ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում: Ճշմարիտն ասած, ինձ հետաքրքրում էր, թե այդ ֆիլմից 20 տարի անց ստեղծագործական ինչպիսի՞ խմորումներ են տեղի ունեցել Գրիգոր Հարությունյան ռեժիսորի մոտ: Արդյո՞ք պահպանվել է ճշմարիտ արվեստագետին վայել նրա ասելիքը, կինոլեզվի ուրույն մտածողությունն ու համարձակությունը: Ֆիլմարվեստի գնահատման իմ չափանիշը շատ պարզ ու հստակ է: Եթե ֆիլմի դիտման ավարտից հետո կինոնկարի ասելիքը, բարձրացրած հարցադրումներն ինձ ուղեկցում են գոնե մեկ ժամ, ես այն հաջողված եմ համարում: Անկեղծ ասած, «Կայացում» ֆիլմի դիտումից հետո, ոչ թե մեկ ժամ, այլ մեկ օր շարունակ մտածում էի նրա շուրջ, որ ռեժիսորը ստեղծել է հրապարակախոսական խոր հնչեղություն ունեցող մի արժեքավոր ֆիլմ:**

**«Կայացում» ֆիլմը մի յուրօրինակ շարունակությունն է ռեժիսորի «Թատերական հրապարակի»: Սակայն այս պարագայում Գ. Հարությունյանը 60-րոպեանոց ֆիլմում ընդգրկել է վերջին 20 տարում մեզանում տեղի ունեցած գրեթե բոլոր հայտնի իրադարձությունները: Սակայն խնդիրն այստեղ Հայաստանում տեղի ունեցածը չէ: Նմանատիպ իրադարձություններ կարող էին կայանալ ոչ միայն Հայաստանում, այլեւ որեւէ երկրում:**

**Այնտե՛ղ, որտեղ ժողովուրդը անկախության ուղին է բռնում...**

**Այնտե՛ղ, որտեղ ժողովուրդն իր սեփական պետականությունն է ստեղծում...**

**Այնտե՛ղ, որտեղ ճակատագրի հեգնանքով իրար են խառնվում ազգային Ես-ն ու հանուրի Մենք-ը, ստեղծելով նորօրյա պատմություն:**

**«Կայացում» ֆիլմի ոգին ու շունչը այն չէ, թե վերջին երկու տասնամյակում որ ղեկավարի օրոք Հայաստանում ինչպիսի անցուդարձ է տեղի ունեցել: Այլ ա՛յն, թե ժողովրդի վրա ինչ է նստել «Անկախություն» այդ «քաղցր» բառի գինը: Այլ ա՛յն, որ 20-ամյա այդ ճանապարհը կարող էր անցնել կայացող որեւէ երկիր եւ հերոսական որեւէ ժողովուրդ: Այստեղ պետք չէ նժարի վրա դնել ու բաղդատել, թե ով ինչ է արել անցած երկու տասնամյակում: Այդ ամենը ֆիլմում ընդգծված, միասնական, կուռ ու դժվարին մի ճանապարհ է, որի անցումը դեռ ընթացքի մեջ է:**

**Ռեժիսոր Գրիգոր Հարությունյանի ֆիլմը սկսում է լուսանկարչի սովորական ցուցահանդեսի բացումով: Ֆիլմում լուսանկարչի գիծը դառնում է լեյտմոտիվ, կատարվող գործողությունների բանալի եւ այդ սովորականը աստիճանաբար դառնում է ոչ սովորական: Դա նորօրյա պատմություն է մի ժողովրդի, որը տառապանքների եւ կատարսիսի միջով իր վաղվա օրն է կերտում: Ռեժիսորը կադր առ կադր, դրվագ առ դրվագ, մանրակերտ ստեղծողի նրբությամբ միահյուսում է վերջին երկու տասնամյակի կարեւոր անցքերը, դրանք դարձնելով կինոարվեստի ամբողջական հզոր մի խոսք: Ֆիլմի ընթացքում աներեւույթ ընդգծվում է, որ ինչպիսի դժվարին իրավիճակ էլ ստեղծվի, անկոտրում է այս ժողովրդի կամքը: Նա հաստատակամ է իր վերջնական հաղթանակի ձգտումներում: Ֆիլմը մոնտաժված է վարպետորեն եւ առանց տեքստի խոսուն է ամեն մի կադր: Ֆիլմում երաժշտությունը սոսկ ֆոնի համար չէ, այն գործող անձ է, կադրին ու էպիզոդին լրացնող գործոն:**

**«Կայացում» լիամետրաժ ոչ խաղարկային ֆիլմը, անշուշտ, Գրիգոր Հարությունյանի եւ «Հայկ» կինոստուդիայի վերջին տարիների հաջողություններից մեկն է: Այն ստեղծված է մեկ շնչով, ոչ խաղարկային կինոյին հարիր լավագույն սկզբունքներով:**

**Մեր պատմությունը շարունակվում է եւ, ուրեմն ֆիլմը շարունակվելու է...**

**ՌՈԲԵՐՏ ՄԱԹՈՍՅԱՆ**
**«+Կինո» պարբերականի խմբագիր**

# Հնդկուհու «Անմահ սիրո սաքը»

**Ազգային պատկերասրահում երեկ բացվեց մի ցուցահանդես, որը, պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանի խոսքով, հազվադեպ տեղի ունեցող միջոցառումներից է: Պատկերասրահում ներկայացված են հնդիկ նկարչուհի Բաբիտա Բիսվասի աշխատանքները: Նա նկարում է վարլի ոճով: «Իմ աշխատանքները սերում են Մահարաշտրա նահանգից, որը Հնդկաստանի արեւմուտքում է: Ես ավելի գունավորել եմ վարլի ոճն ու իմ կերպարները վերցրել հնդկական առասպելաբանությունից», ասում է Բաբիտա Բիսվասը:**

**«Անմահ սիրո սաք» խորագրի տակ են ամփոփված Բաբիտա Բիսվասի ներկայացրած աշխատանքները: Ավանդական վարլի նկարչությունը պատկերում է վարլի ցեղախմբի առօրյան: Վարլիները Մահարաշտրայի Տհանա բնակավայրի բնիկներն են, որոնք ապրում են հասարակ կավից, եղեգից պատրաստված ու աքարով պատված տնակներում: Վարլի նկարչությունը ներկայացնում է անցյալի իրադարձությունները, վարլիների խաղաղ ներկան ու երազանքները: Ցուցահանդեսը, որով մեկնարկում է հայ-հնդկական մշակութային համագործակցությունը, մեր երկրի փոքրիկ անկյունում ներկայացնում է հնդկական մշակույթն ու մթնոլորտը: Փարավոն Միրզոյանն ասում է, որ Հնդկաստանում եղել է 30 տարի առաջ. «Դա այն երկիրն է, որտեղ վերադառնալու ցանկություն եմ ունեցել: Նկարչուհու ցուցահանդեսն Ազգային պատկերասրահը մեծ հաճույքով ընդունեց: Բաբիտա Բիսվասի գործերը ժամանակակից են, միաժամանակ ազգային, ինչի պակասն ունի համաշխարհային արվեստը»:**

**Վարլի ցեղախմբի կանայք վարլի նկարչական ոճն օգտագործում են իրենց տան պատերը զարդարելու համար, հարսանիքների ու տոների ժամանակ նկարազարդում են նաեւ բակերը: Ներկը ստանում են ծեծած բրնձին ջուր խառնելով, իսկ որպես վրձին ծառայում են ծառերի ճյուղերը:**

**Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Հայաստանում Հնդկաստանի դեսպան Աչալ Կումար Մալհոտրան ու մշակույթի նախարարի տեղակալ Արթուր Պողոսյանը: Աչալ Մալհոտրան նշեց, որ 2010-ի նոյեմբերին, երբ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն այցելել է Հնդկաստան, հենց այդ ժամանակ էլ որոշվել է 2 երկրների միջեւ իրականացնել մշակութային համագործակցություն: «Սա հնարավորություն է ընձեռում Հայաստանի ու Հնդկաստանի ժողովուրդներին ծանոթանալու մշակութային ժառանգությանը, որն ունեն 2 երկրները», ավելացրեց դեսպանը: Ցուցահանդեսը, որը բաց կլինի մինչեւ փետրվարի 20-ը, ներկայացնում են մշակույթի նախարարությունը, Հայաստանում Հնդկաստանի դեսպանությունն ու Մշակութային կապերի հնդկական խորհուրդը: Հայաստանում ուղիղ 10 օր հնարավորություն ունենք հաղորդակցվելու հնդկական արվեստին Բաբիտա Բիսվասի նկարների ու նրա պատկերած անմահ սիրո սագայի միջոցով: Նկարչուհու գործերը պարզ են, բայց պատկերավոր: Վարլի նկարչության մեջ սպիտակը գերիշխող գույն է:**

**Չնայած վարլի ոճն աշխարհում տարածում է գտել 30 տարի առաջ, բայց ըստ փորձագետների՝ ավելի քան 1000 տարվա պատմություն ունի:**

**Բաբիտա Բիսվասը ծնվել է 1969 թվականին Ասսամ նահանգում, 1990-ին ավարտել է Նյու Դելիի Կանանց պոլիտեխնիկի կոմերցիոն արվեստի բաժինը, մասնագիտացել է վարլի ժողովրդական արվեստի մեջ: Նկարչուհին ստացել է բազմաթիվ մրցանակներ եւ ունեցել անհատական ցուցահանդեսներ:**

**Ի. Պ.**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Կորել է «Ազաք» ԱԿՖ ՊՓԲԸ-ի (գրանցման համարը 80.120.00580) կլոր կնիքը: Համարել անվավեր:

**Լուծարման հանձնաժողով**

# Հայ շախմատիստներից չորսը գլխավորում են աղյուսակը

Շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարի 2-րդ տուրում ուժեղագույնների մրցապայքարին մասնակցող հայաստանցի 3 շախմատիստներից միայն Սերգեյ Մովսիսյանը հաղթեց՝ պարտության մատնելով ռուսաստանցի Դմիտրի Բոչարովին: Տիգրան Պետրոսյանն ու Ավետիք Գրիգորյանը կեսական միավոր վաստակեցին՝ հաշտություն կնքելով համապատասխանաբար Միխայիլ Կոբալիայի եւ Էմիլ Սուտովսկու հետ:

2 տուրից հետո Մովսիսյանն ու Պետրոսյանը վաստակել են 1,5-ական, Գրիգորյանը՝ 1 միավոր: Բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը եւս ունի 1 միավոր: Նա հաշտություն կնքեց ռուսաստանցի Իգոր Լիսիի հետ: 2-ական միավորով առաջատարներն են վիետնամցի Լե Քուանը եւ սլովենացի Լուկա Լենիչը:


Դավիթ Շահինյան

B խմբի մրցաշարում անդրանիկ հաղթանակները տոնեցին Տիգրան Քոթանջյանն ու Հովհաննես Գաբուզյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Զոնաթան Կառլստեդին եւ Պավել Սմիռնովին: Մեր մյուս շախմատիստները՝ Սուրեն Պողոսյանը, Դավիթ Պետրոսյանը, Հովիկ Հայրապետյանն ու Վահե Բաղդասարյանը պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Քոթանջյանը, Գաբուզյանն ու Պողոսյանը վաստակել են 1,5-ական միավոր: Նույնքան միավոր ունի նաեւ ԱՄՆ-ում բնակվող Մելիքսեթ Խաչիյանը, որը հաղթեց Ալեքսանդր Ֆիլիպենկոյին:

Աղյուսակը 2-ական միավորով գլխավորող 10 շախմատիստների թվում է նաեւ ռուսաստանցի Պողոս Նահապետյանը, որը սեւերով պարտության մատնեց իր հայրենակից Արթուր Գաբրիելյանին:

C խմբի մրցաշարում հանդես եկող հայաստանցի 9 շախմատիստներից չորսը՝ Դավիթ Շահինյանը, Սարգիս Մանուկյանը, Արթուր Ղազարյանն ու Մարկ Բասենցյանը 2-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: Շահինյանը պարտության մատնեց Մաքսիմ Լուգովսկոյին, Մանուկյանն առավելության հասավ Ժամսարան Ցիդիրովի նկատմամբ, Ղազարյանը հաղթեց Յու Յուհուային, Բասենցյանն էլ շահեց Վլադիմիր Անդրեեւի հետ անցկացրած մրցավեճը: Մեր խաղակը 13 շախմատիստների հետ 2 միավորով գլխավորում է աղյուսակը: Նրանց թվում է նաեւ ռուսաստանցի Էդուարդ Բարսամյանը:

# ՀՀ հավաքականի մրցակիցներից հաղթեցին միայն իռլանդացիները

**Չորեքշաբթի կայացած ընկերական մի շարք հանդիպումներից հայ ֆուտբոլասերներին առաջին հերթին հետաքրքրում են Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցների մասնակցությամբ տեղի ունեցած մրցախաղերը: Բացի իռլանդացիներից, մյուսները պարտվեցին:**



**ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից ՌԴ ընտրանին Աբու Դաբիում 0-1 հաշվով պարտվեց Իրանի հավաքականին: Վերջինս հաղթանակը կորզեց խաղավերջում Խալաթբարիի խփած միակ գոլի շնորհիվ: ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկատը դժգոհ է մնացել ինչպես հանդիպման արդյունքից, այնպես էլ հավաքականի մի շարք ֆուտբոլիստների գործողություններից: Պարտության պատճառներից մեկը հոլանդացի մասնագետը համարել է որոշ ֆուտբոլիստների հոգնածությունը: Սակայն Ադվոկատը համոզված է, որ ընկերական վերջին երկու հանդիպումներում հավաքականի կրած պարտությունները ոչ մի կերպ չեն անդրադառնա ֆուտբոլիստների մարտական ոգու վրա, որոնք կկարողանան Եվրո-2012-ի եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել:**

**Սլովակիայի հավաքականը, որին մեր ֆուտբոլիստները Երեւանում հաղթել էին 3-1 հաշվով, սեփական հարկի տակ 0-1 հաշվով ... Սլովակիայի հավաքականը, որին մեր ֆուտբոլիստները Երեւանում հաղթել էին 3-1 հաշվով, սեփական պարտություն կրեց Լյուքսեմբուրգի ընտրանուց (1-2): Ընդ որում Վլադիմիր Վայսի տրամադրության տակ էին Սլովակիայի հավաքականի բոլոր առաջատար ֆուտբոլիստները բացառությամբ Մարտին Շկրտելի: Սլովակներն առաջինը հասան հաջողության, երբ 56-րդ րոպեին Ենդրիշեկը գրավեց մրցակցի դարպասը: Սակայն մինչեւ խաղավարտ Դա Մոտան 2 անգամ խոցեց Մուխայի պաշտպանած դարպասը եւ հաղթանակ պարգեւեց իր թիմին:**

**Միայն Իռլանդիայի հավաքականին հաջողվեց հաղթանակ տոնել: Դուբլինում իռլանդացիները 3-0 հաշվով պարտության մատնեցին Ուելսի ընտրանուն: Աչքի ընկան Գիբսոնը, Դաֆն ու Ֆեխին:**

**Մակեդոնիայի հավաքականը սեփական հարկի տակ 0-1 հաշվով պարտվեց Կամերունի ֆուտբոլիստներին: Անդորրայի հավաքականն էլ հյուրընկալվելիս պարտվեց մոլդովացիներին (1-2):**

**Ընկերական մրցախաղերից կարելի է հատկապես առանձնացնել առաջատար հավաքականների դիմակայությունը: Դրանցից մեկը կայացավ Դորտմունդում, որտեղ ուժերը չափեցին Գերմանիայի եւ Իտալիայի հավաքականները: Գրանցվեց մարտական ոչ-ոքի: 16-րդ րոպեին Միրոսլավ Կլոզեն առաջ մղեց տանտերերին, իսկ խաղավարտից 9 րոպե առաջ Ռոսին իտալացիներին փրկեց պարտությունից:**

**Սեն Դենիի «Ստադ դ՛Ֆրանս» մարզադաշտում Ֆրանսիայի հավաքականը Բենզեմայի խփած միակ գոլի շնորհիվ պարտության մատնեց բրազիլացիներին: Արգենտինայի հավաքականը Ժնեւում 2-1 հաշվով հաղթեց պորտուգալացիներին: Առաջին խաղակեսում կողմերը մեկական գնդակ փոխանակեցին: Հաշիվը բացեց արգենտինացի Դի Մարիան, որին գոլով պատասխանեց պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն: Արգենտինացիները հաղթանակը կորզեցին խաղի վերջին րոպեին, երբ Մեսին դիպուկ իրացրեց 11 մ հարվածը:**

**Աշխարհի չեմպիոն իսպանացիները միայն խաղավարտից 4 րոպե առաջ կարողացան կոտրել կոլումբիացիների դիմադրությունը: Հաղթանակն ապահովեց Դավիթ Սիլվայի գոլը: Անգլիայի ընտրանին հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց դանիացիներին, իսկ հոլանդացիները վստահ հաղթանակ տոնեցին ավստրիացիների նկատմամբ (3-1):**

**Ընկերական մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Էստոնիա-Բուլղարիա՝ 2-2, Ալբանիա-Սլովենիա՝ 1-2, Շվեդիա-Ուկրաինա՝ 1-1, Կիպրոս-Ռումինիա՝ 1-1, Իսրայել-Սերբիա՝ 0-2, Թուրքիա-Հար. Կորեա՝ 0-0, Ադրբեջան-Հունգարիա՝ 0-2, Խորվաթիա-Չեխիա՝ 4-2, Բոլիվիա-Լատվիա՝ 1-2, Լեհաստան-Նորվեգիա՝ 1-0, Մալթա-Շվեյցարիա՝ 0-0, Բելգիա-Ֆինլանդիա՝ 1-1:**

# Հնդկաստանը հայտ է ներկայացրել

Այն բանից հետո, երբ Լոնդոնը հրաժարվեց 2012-ին իր մոտ կազմակերպել շախմատի աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղը Վիշվանաթան Անանդի եւ հավակնորդների մրցաշարի հաղթողի միջեւ, Հնդկաստանը պաշտոնապես հայտ է ներկայացրել դառնալու մրցամարտի կազմակերպիչ: Այս մասին ՖԻԴԵ-ի նախագահական խորհրդի նիստում հայտարարել է Հնդկաստանի շախմատի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Սունդարը:

Սակայն ՖԻԴԵ-ն մրցաշարի վայրի ընտրությունը կկատարի միայն մայիսին, երբ հայտնի կդառնա Կազանում անցկացվելիք հավակնորդների մրցամարտի հաղթողը: Որովհետեւ մրցավայրի ընտրության հարցում բացի Անանդից, հավակնորդի կարծիքը եւս կարեւոր է:

Եթե Հնդկաստանը մրցաշարը կազմակերպելու իրավունք ստանա, ապա աշխարհի թագի համար մրցամարտը հավանաբար կանցկացվի հնդկական Չեննայ քաղաքում: Այս տարի այնտեղ կայանալու է պատանիների աշխարհի առաջնությունը: Այն մրցաշարի կազմակերպման փորձը հետագայում կօգնի բարձր մակարդակով անցկացնել աշխարհի առաջնության եզրափակիչը:

## ՖՈՒՏԲՈԼ

# «Բանանցում» շարունակվում են փորձարկումները

**Ինչպես տեղեկացանք «Բանանց» ակումբի մամուլի քարտուղարությունից, թիմում փորձաշրջան կանցնի չեռնոգորցի հարձակվող Սոջա Ռադոնիչը: Նա «Բանանցին» կմիանա Բելեքում, որտեղ թիմը սկսել է ուսումնամարզական հերթական հավաքը: Անցյալ տարի «Բանանցում» լավ տպավորություն թողած բրազիլացիներ Բետոն եւ Էդուարդո Դոս Սանթոսն ավելի ուշ են սկսել մարզումները: Նրանք ապաքինվել են վնասվածքներից եւ առայժմ անհատական ծրագրով են մարզվում:**

**Թուրքիայում երկշաբաթյա ուսումնամարզական հավաքի ընթացքում նախատեսված են ընկերական հանդիպումներ ռումինական «Գլորիայի», բելառուսական «Նաֆտանի» եւ Կրասնոդարի «Կուբանի» հետ: Չորրորդ խաղի մրցակիցը դեռ հայտնի չէ:**

# Դրեեւն ընդհատեց Դանիելյանի հաղթարշավը

**Բուլղարիայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում ռուսաստանցի Ալեքսեյ Դրեեւին հաջողվեց ընդհատել Էլինա Դանիելյանի հաղթարշավը՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի: Դա հնարավորություն ընձեռեց Դավիթ Ալբերտոյին 5 միավորով ստանձնել միանձնյա առաջատարի դերը: Վերջինս 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Գույդո Կարիոյի հետ մրցավեճում:**

**4,5-ական միավորով հաջորդ տեղերում են Էլինա Դանիելյանը, Ալեքսեյ Դրեեւն ու Ալեքսանդր Դելչեւը: Հրայր Սիմոնյանն անհաջող խաղաց՝ զիջելով Սերգեյ Գրոմովին: Հրայրը 2,5 միավորով զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը: 6-րդ տուրում Դանիելյանը սեւերով կմրցի Ալեքսանդր Դելչեւի հետ:**

# Արոնյանը կմասնակցի Բոտվիննիկի հուշամրցաշարին

**Օգոստոսի 17-ին լրանում է շախմատի աշխարհի 6-րդ չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի ծննդյան 100-ամյակը: Այդ առիթով ՖԻԴԵ-ն 2011-ը հայտարարել է Բոտվիննիկի տարի: Իսկ Ռուսաստանի շախմատի ֆեդերացիան սեպտեմբերին կազմակերպելու է մրցաշար արագ եւ կայծակնային շախմատի կանոններով: Մրցաշարին մասնակցելու համաձայնություն է տվել Լեւոն Արոնյանը: Ուժեղագույն մի շարք գրոսմայստերների թվում կլինեն նաեւ աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդն ու Վլադիմիր Կրամնիկը:**

# «Փյունիկը» պարտվեց երկրորդ կազմով

Կիպրոսում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող փյունիկցիներն ընկերական խաղում 0-3 հաշվով պարտվեցին ռումինական «Օցելուլին»: Այդ խաղը կայացավ Հայաստան-Վրաստան հանդիպումից 2 ժամ անց, ուստի հավաքականում ընդգրկված «Փյունիկի» ֆուտբոլիստները չմասնակցեցին «Օցելուլի» հետ մրցավեճին: Փաստորեն, «Փյունիկը» Կիպրոսում իր առաջին ստուգողական խաղում 2-րդ կազմով հանդես եկավ: Փետրվարի 15-ին «Փյունիկը» կմրցի Բոսնիայի «Սլոբոդայի» հետ, իսկ 2 օր անց կվերադառնա Հայաստան:

# Հայ ըմբիշները մեկնեցին Ստամբուլ

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականը մեկնել է Ստամբուլ, որտեղ կմասնակցի Գրան պրիի մրցաշարին: Հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասարյանը թիմում ընդգրկել է 12 ըմբիշի: Թուրքիայում մրցագորգ դուրս կգան Միհրան Ջաբուրյանը, Գեղամ Բաբախանյանը (երկուսն էլ՝ 55 կգ), Աշոտ Տերտերյանը, Դավիթ Սաֆարյանը (երկուսն էլ՝ 66 կգ), Սուրեն Մարկոսյանը, Մուսա Մուրթազալիեւը (երկուսն էլ՝ 74 կգ), Վադիմ Լալիեւը, Հաջիմուրադ Մագոմեդովը (երկուսն էլ՝ 84 կգ), Էդգար Ենոքյանն (96 կգ) ու գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը:

# «Ռեալն» աշխարհի ամենահարուստ ակումբն է

Deloitte ընկերության տվյալներով Մադրիդի «Ռեալը» 6-րդ տարին անընդմեջ ճանաչվել է աշխարհի ամենահարուստ ակումբ: Հաշվարկներ կատարելիս, ընկերությունը հաշվի չի առնում ֆուտբոլիստների աշխատավարձերն ու տրանսֆերային գները: Հիմնական ցուցանիշը տարբեր մրցաշարերի մասնակցությունից, տոմսերի եւ ակումբի խորհրդանշանով ապրանքների, խաղերի հեռուստաիրավունքի վաճառքից, գովազդային տարբեր պայմանագրերից ստացվող ակումբների եկամուտն է:



«Ռեալն» անցյալ մրցաշրջանում 2-րդ տեղը գրավեց Իսպանիայի առաջնությունում, իսկ չեմպիոնների լիգայի մրցաշարում պայքարից դուրս մնաց 1/8 եզրափակիչում՝ պարտվելով ֆրանսիական «Լիոնին»: Ակումբին մեծ եկամուտ ապահովեց Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում անցկացված չեմպիոնների գավաթի «Բավարիա»-«Ինտեր» եզրափակիչ հանդիպումը:

2-րդ տեղում «Ռեալի» գլխավոր մրցակից «Բարսելոնն» է, որի համար անցած մրցաշրջանն ավելի հաջող էր: «Բարսելոնը» նվաճեց Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը, արժանացավ աշխարհի ակումբային առաջնության հաղթողի կոչմանը: Հաջորդ տեղերում են «Մանչեսթր Յունայթեդը», «Արսենալն» ու «Չելսին»: Աշխարհի 20 ամենահարուստ ակումբների ընդհանուր եկամուտն առաջին անգամ գերազանցել է 4 մլրդ եվրոն:

# Իրանցի գրոսմայստերի ռեկորդը

**Իրանցի գրոսմայստեր Էհսան Հաեմ Մագամին միաժամանակյա խաղի համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: 25 ժամ 15 րոպե տեւած մարաթոնյան այդ մրցավեճում գրոսմայստերը խաղաց 614 խաղատախտակների վրա: 590-ում նա հաղթեց, 16-ն ավարտեց ոչ-ոքի, 8-ում պարտվեց: Խաղի ընթացքում Մագամին 5-7 րոպեով ընդմիջում էր ելույթը հանգստանալու համար:**

**Մագամին գերազանցեց իսրայելցի Ալիկ Գերշոնի նախկին ռեկորդը, որը 2010-ի հոկտեմբերին միաժամանակյա խաղի սեանս էր անցկացրել 523 խաղատախտակի վրա:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## «Խոսրովի անտառը» խորոված ուտելու վայր չէ

### *Բնապահպանները ստորագրահավաք են սկսել տարածքի պահպանման համար*

«SOS Խոսրով» էկոլոգիական հասարակական դաշինքի անդամները կրկին ահազանգում են. «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Գիլան» արգելավայրի խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Բնապահպանների պայքարի նպատակը Խոսրովի անտառի պահպանումն է: «Խոսրովը պետք է ոչ թե կազմալուծվի, քայքայվի, այլ զարգանա ու պահպանվի»: Սա դաշինքի անդամ **Հրանտ Սարգսյանի** դիրքորոշումն է:

Հայաստանում կա երեք արգելոց՝ Շիկահողի, Էրեբունի եւ Խոսրովի անտառ: Ի տարբերություն առաջին երկուսի՝ «Խոսրովի անտառի» գիտական արժեքը շատ բարձր է: Խոսրովի անտառում կան մի քանի տիպի համակեցություններ՝ անտառ, նոսր անտառ, տափաստան, հուշարձաններ, պատմական արժեքներ:

Խոսրովի անտառը հարուստ է կենդանական եւ բուսական աշխարհով: Արգելոցի տարածքում՝ 200 հա կազմող Գիլանում կան արջեր, գայլեր, քարայծեր: Այսօր այնտեղ կառուցվող շինարարությունը հսկայական սպառնալիք է նրանց համար:

«Ազգ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի խնդրին: Հիշեցնենք, որ 2007-ին կառավարության որոշմամբ Խոսրովի անտառի «Գիլան» հատվածն անվանվեց արգելավայր: Իրավաբանական առումով կարգավիճակի փոփոխությունը նշանակում է, որ տարածքը կարող է տրվել վարձակալությամբ, եւ այնտեղ կարելի է զարգացնել էկոտուրիզմը: Ամիսներ անց կառավարության մեկ այլ որոշմամբ 60 տարի ժամանակով տարածքը վարձակալության հիմունքներով տրամադրվեց «Հովազաձոր» ՍՊԸ-ին: Այդ ժամանակ մամուլում լուրեր էին շրջանառվում, որ ընկերության հիմնադիրներ Կամո Խաչատրյանն ու Միխայիլ Բեգռուկովը սերտ հարաբերություններ ունեն պետական շրջանակների հետ: Մասնավորապես Խաչատրյանի որդու քավորը ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն է, որը 2007-ին որպես փոխվարչապետ ստորագրել է վերոնշյալ որոշումները: Կառավարությունը վերոնշյալ որոշումը կայացրել էր Գիլանում էկոտուրիզմի զարգացման նպատակով, սակայն իրականում տարածքը վերածվում է հերթական խաշ-խորոված ուտելու վայրի:



ՖՈՏՈԼՈՒՐ

Էկոտուրիզմ ասվածը բացառում է բետոնե շինարարություն: Ըստ միջազգային ստանդարտների, էկոտուրիզմ զարգացնելու համար պետք է կառուցել միայն փայտյա քոթեջներ: Դրանց կառուցման համար ընտրում են այնպիսի վայր, որ ծառ կտրելու անհրաժեշտություն չառաջանա, բացի դրանից՝ հնարավոր լինի վարձակալության պայմանագրի ավարտին ապամոնտաժել:

Ի տարբերություն բետոնե կառույցների՝ փայտյա քոթեջները որեւէ վնաս չեն կարող հասցնել բուսական եւ կենդանական աշխարհին:

Այնուամենայնիվ, անգամ միջազգային չափանիշներին համապատասխանող էկոտուրիզմը կարող է հսկայական վնաս հասցնել արգելոցին:

Էկոտուրիզմը ենթադրում է մարդկանց հոսք, ինչը վտանգավոր է արգելոցի համար: Բնապահպան **Կարինե Դանիելյանի** մեկնաբանությամբ՝ արգելոցում պետք է ծավալել ոչ թե տնտեսական, այլ միայն գիտական գործունեություն:

Մինչդեռ Գիլանում կառուցում են երկհարկանի հյուրանոց եւ ռեստորան: Սեփականատերերը մտադրվել են նաեւ տարածքում լիճ կառուցել, իսկ կիսավեր եկեղեցու բակում՝ մատաղատեղի:

Բնապահպանների դժգոհությունը հիմնավորված է այն փաստով, որ կառավարության աջակցությամբ բնությանը հսկայական վնաս է հասցվում, խախտվում են ՀՀ օրենքներ ու միջազգային կոնվենցիաներ:

Հայաստանն արդեն երկու խիստ զգուշացում ունի Միջազգային կոնվենցիայի խախտման առնչությամբ: «Դա մեծապես ազդում է երկրի միջազգային վարկի վրա: Հաջորդ անգամ Հայաստանին ուղղակի կհանեն կառույցից», ասում է բնապահպան Կարինե Դանիելյանը:

Բնապահպանները նամակներ են ուղարկել բնապահպանության նախարարություն եւ ՀՀ մարդու իրավունքների արդեն նախկին պաշտպան Արմեն Հարությունյանին, սակայն որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել եւ մոթել հիշեցնող կառույցները չեն ապամոնտաժվում:

Բնապահպանները սկսել են ստորագրահավաք անցկացնել, արդյունքները կներկայացվեն վարչապետին ու կառավարությանը՝ Գիլանին նախկին կարգավիճակ վերադարձնելու պահանջով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Մի՞թե ամենաթողությունը մեկընդմիշտ կայսր է թագադրված

### *Ի վերջո, ո՞վ է հեռուստադիտողի ճաշակի չպղծման պաշտպանը*

Երկու օր է, ինչ փորձում եմ հասկանալ՝ մեր եթե՞րն է իրոք այդքան «սավրեմեննի», թե ես՝ կյանքին ...հակընթաց, որ չեմ կարողանում հաղթահարել «Արմենիայի» հրամցրած «Ճիշտ, թե սուտ»... նողկանքը: Խոստովանեմ՝ հայկական եթերով երբեւէ այդքան զազրելի, տրամաբանությունից ու բարոյականությունից այդքա՜ն հեռու (հեռու որքա՜ն մեղմ է ասված) բան չեմ տեսել: Ավելի չպատճառաբանված, անհավասարակշիռ ոգեւորությունը, անկապ՝ իրակա՞ն, թե՞ մայմունություն անող «հերոսների» պահվածքի վայ դրամատիկան, սեռական կյանքի ինտիմ մանրամասներին վերաբերող տերմինների...պաթետիկ ու լպրծուն արտաբերումները, դրանց... աճուրդի դրված ճիշտ կամ սուտ լինելու խոստովանությունների...իբր մեխանիկական ախտորոշումների հոգոցախառը, ծորուն, տհաճ արտաբերմամբ «ճիշտ է», «սուտ է»-ները...Հարգեմ ինքս ինձ ու չվերարտադրեմ այդ...«արվեստի գլուխգործոցի» անգամ ոչ մանր մանրամասնությունները: Ուղղակի մի բան պարզ է՝ դա մտքի խեղվածությա՞ն, անհագուրդ...կրքերի, թե՞...իսկապես շատ հաջող դրսահաճ, ավերիչ դիվանագիտության իրականացում է: Բայց ամեն դեպքում՝ իսկապե՞ս այդքան ցածրացել, այդքան ուղեծրից դուրս ենք եկել, այդքան կորցրել ենք ինքնահարգանքը, այդքան թքած ունենք հեռուստադիտողի վրա: Թե՞ դա ձեր կարողությունների...պիկն է:

Ամեն դեպքում՝ իրավունքներից ճամարտակող մեր երկրում ո՞վ է, ի վերջո, հեռուստադիտողի ճաշակի չպղծման պաշտպանը, ո՞վ պիտի չհանդուրժի նրա ժամանակի ու նյարդերի վրայով կեղտոտ ոտքերով այդքան ու այդչափ քայլելու փորձերը: Չէ, ի՞նչ փորձ, ի՞նչ քայլել՝ պղծելը: Մի՞թե ամենաթողությունը մեկընդմիշտ կայսր է թագադրված: Հետաքրքրական է՝ ո՞վ է այդ կայսրությունում... հեռուստադիտո՞ղը...

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

ՀԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

## Քաղաքական լոբբիզմ, թե՞ քաղաքագիտական վերլուծություն

*3-րդ էջից*

**Ճգնաժամային խումբը, լիակատար ձեւով ադրբեջանական մեկնաբանություններին տեղիք տալով, սադրիչ է համարում հայկական կողմի շինարարական գործունեությունը «Լեռնային Ղարաբաղում եւ հարակից տարածքներում»: Արդյոք դպրոց, ծննդատուն, ճանապարհ կամ ոռոգման համակարգ կառուցելու ծրագրերը կարելի՞ է որակել «սադրիչ»: Նման անմարդկային ձեւակերպում մինչ օրս լսվել է միայն մեկ մայրաքաղաքից, եւ այն իր մեջ կրում է բացարձակապես քննադատության արժանի ցինիզմի որակներ: Որեւէ իրեն հարգող կազմակերպություն, որը կոչված է լինել անաչառ եւ հետազոտական, այն էլ՝ արեւմտյան արժեքներ դավանող, իրեն թույլ չի կարող նման բան թույլ տալ:**

**Ճգնաժամային խումբը գնահատական է տալիս Հայաստանի ներքաղաքական պատկերին, նշելով, թե իբր ՀՀ նախագահը «թույլ վստահություն» ունի Հայաստանում, իսկ ընդդիմությունը ուժեղ է եւ լավ կազմակերպված: Այս նորությունը թերեւս շատերի ծիծաղը կառաջացնի Հայաստանում, ծիծաղ, որը կլինի անկնկալ ոգեւորություն մի քանի հոգու մեջ (թեեւ ցավալի է, որ նման ոգեւորությունը պետք է պատճառվի վարկաբեկված հետազոտական կառույցի կողմից) եւ քմծիծաղ՝ շատերի մեջ: Ի դեպ, ընդհանրապես անտեսվում է Ադրբեջանում ժառանգական միապետության եւ ներքաղաքական կյանքը որեւէ կերպ ներկայացնելու հանգամանքը:**

**Վերլուծությունում կոչ է արվում Ռուսաստանին զերծ մնալ զենք ու զինամթերք տրամադրել՝ այդ ընթացքում անտեսելով որեւէ կոչ անել Ադրբեջանի հիմնական զենք մատակարարող երկրներին՝ Թուրքիային, Բունիային, Իսրայելին որեւէ «կոչ» անելուց:**

**Գիտաֆանտաստիկ վերլուծությունը եւս տեղ է գտել այստեղ: Օրինակ, վերլուծաբանները նշում են, որ մինչեւ 2014 թ. ադրբեջանական նավթային պաշարները կսկսեն նվազել եւ «Հայաստանը ու Լեռնային Ղարաբաղը, տեղյակ լինելով այս ժամանակացույցին, կարող են հրապուրվել նախահարձակ լինելու գայթակղությանը»: Միջազգային հարաբերությունների տեսությունն ունի այսպիսի մի մոտեցում: Մոտեցման էությունը նրանումն է, երբ հակառակորդ երկրի բյուջեն միանշանակ վերընթաց աճ է ունենում կանխատեսելի ապագայում, եւ քո բյուջեն, ի տարբերություն հակառակորդի, այդ նույն ժամանակ անկում է ունենում, այս անկման եւ աճի հատման պահին հնարավոր է նախահարձակ լինել, որպեսզի ձեռք բերես այն, ինչն այլեւս հնարավոր չի լինի ձեռք բերել ապագայում: Այս տեսության կողմնակիցները օբյեկտիվորեն նման օրինակներ են բերում 1913 թիվը եւ 1940-41 թթ.-ները, երբ Գերմանիան Ռուսաստանի եւ այնուհետեւ ԽՍՀՄ հանդեպ նման անկում ունեցավ եւ սանձազերծեց իր համար կործանարար Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմները: Հայաստանի եւ Ադրբեջանի պարագայում նման հարաբերակցություն (անկում ընդդեմ աճի) տեղի չի ունեցել, սակայն 2005 թ.-ից ադրբեջանական բյուջեն կտրուկ աճ է ունեցել, երբ նույն տարվա ռազմական բյուջեն արձանագրեց 71 տոկոսանոց աճ: Նույն հատվածում, սակայն, հայկական տնտեսությունը որեւէ անկման նշույլ անգամ չուներ: Բայց, եթե ընդունենք տեսությունը մասամբ, ապա հայկական կողմը 2005 թ.-ին պետք է նախահարձակ լիներ, քանի որ հակառակ կողմը տեսանելի ապագայում շարունակ ռազմական բյուջեի աճ պետք է արձանագրեր: Հայկական կողմը նախահարձակ չեղավ, քանի որ ագրեսոր երկիր չէ: Դա առավել եւս չի կարող տեղի ունենալ 2014 թ.ին: Համաձայն վերոհիշյալ տեսության, եթե կողմերից որեւէ մեկը նախահարձակ լինի 2014 թ.ին, դա Ադրբեջանը պետք է լինի: Ակնհայտ է, որ Ճգնաժամային խմբի վերլուծաբանները տարընթերցել են քաղաքագիտական տեսությունը եւ ֆանտաստիկ, կամ ավելի շուտ աբսուրդ, եզրահանգման եկել, որին որեւէ ռազմական փորձագետ լուրջ չի կարող վերաբերվել:**

**Զեկույցի հեղինակները նաեւ չեն ընկալում, որ Հայաստանը ընդունում է Մադրիդյան փաստաթուղթը որպես հիմք բանակցությունները շարունակելու համար, ինչի մասին հայկական կողմը բազմիցս է հայտարարել: Մինչդեռ ադրբեջանական կողմն ունի վերապահումներ: Այս հանգամանքը գլխիվայր է ներկայացված զեկույցում, թե իբր հայկական կողմը որեւէ հստակություն չի մտցնում այս հարցում՝ ի տարբերություն Ալիեւի, որը հայտարարել է, որ «հիմնականում ընդունում է հիմնարար սկզբունքները»:**

**Զեկույցը արտացոլում է նաեւ այն իրականությունը, որ հեղինակները աշխատել են Բաքվից, Ստամբուլից եւ որոշ չափով նաեւ Թբիլիսիից: Երեւանում Ճգնաժամային խումբը չունի սեփական վերլուծաբանը, որը միգուցե կփորձեր ինչ-որ կերպ ճշգրտումներ մտցնել զեկույցում: Սակայն փորձագետի առկայության դեպքում էլ չի կարելի վստահաբար ասել, որ դա կստացվեր: Երբ վերլուծությունն արվում է հստակ նախապաշարմունքով, չի կարող հաջողություն ունենալ, քանի որ վերածվում է քաղաքական լոբբինգի առարկայի, թիրախային կողմերից մեկը, կամ այս պարագայում, երեքն էլ, այն պարզապես անտեսում են եւ, բնականաբար, պիտակավորում: Այսինքն, խումբը երկարաժամկետ եւ արժեքավոր վերլուծություններ չի կարողանում տրամադրել, որոնք ողջունելի կլինեն հակամարտող կամ հակադրվող կողմերից յուրաքանչյուրի համար: Ճգնաժամային խումբն անաչառ հետազոտական դաշտից փորձ է կատարում ներգրավվել քաղաքական գործընթացների մեջ ակնհայտ միակողմանի մոտեցումներով, որն ամենեւին ողջունելի չէ:**

ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ
Հանրապետական խմբակցության քարտուղար

## Գույժ

Գաբրիելյանների ընտանիքը խոր վշտով գուժում է
**Արսեն Հովսեփի Գաբրիելյանի**
մահը, ով կնքեց իր մահկանացուն 84 տարեկան հասակում՝ ք. Երեւանում:

Հոգեհանգիստը տեղի կունենա 11.02.2011 թ.-ին ժամը 18.00-ին, Գյուլբենկյան 73 հասցեում (նախկին Կուտուզով փողոց):

Հուղարկավորությունը հաջորդ օրը՝ 12.02.2011 թ.-ին նույն հասցեից ժամը 14.00-ին:

## Ցավակցություն

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ողջ անձնակազմը ցավակցում է Արա Խզմալյանին եւ նրա հարազատներին սիրելի հոր՝ **Էդիկ Խզմալյանի** մահվան կապակցությամբ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: